Գիտություն

ՆՈՅԵՄԲԵՐ
№11
(403)
2025 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ ● Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ՀՀ ԳԱԱ-ում նշվեց Հանուն խաղաղության և զարգացման գիտության համաշխարհային օրը և ՀՀ ԳԱԱ հիմնադրման օրը, տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ 2025 թ. մրցանակի պարգևատրման արարողությունը

Ս/թ. նոյեմբերի 10-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում նշվեց Հանուն խաղաղության և զարգացման գիտության համաշխարհային օրը և ՀՀ ԳԱԱ հիմնադրման օրը: Միջոցառմանը մասնակցեցին պետական, օրենսդիր կառույցների պաշտոնյաներ, գիտական և կրթական կառույցների ղեկավարներ, ներկայացուցիչներ, ուսանողներ և դպրոցականներ:

Մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սաղյա-

նը: Իր շնորհավորական խոսքում ՀՀ ԳԱԱ նախագահը նշեց, որ անհրաժեշտ է համարձակ քայլերով շարժվել դեպի նորարարություններ և բարձր տեխնոլոգիաներ: «Մենք ապրում ենք գիտական հրաշքների դարաշրջանում՝ արհեստական բանականություն, գենետիկական տեխնոլոգիաներ, տիեզերական հետազոտություններ: Հասարակությունը և պետությունը պետք է շոշափելի արդյունք տեսնեն՝ լինի դա պաշտպանական նոր տեխնոլոգիա, գյուղատնտեսական կամ արդյունաբերական նոր լուծում, թե առողջապահական նոր մեթոդ: Հայաստանը չի կարող իրեն թույլ տալ ունենալ տնտեսությունից անկախ գիտություն: Գիտությունը պետք է դառնա Հայաստանի տնտեսության շարժիչ ուժը: Պարբերաբար մարդկությունն առերեսվում է վտանգավոր մարտահրավերների հետ, որոնց հակադրման միակ հնարավոր ուղին գիտական հիմքերի վրա դրված տնտեսության և պաշտպանության համակարգերի ստեղծումն է: Ցավոք, Հայաստանի Հանրապետությունը, մեր պաշտպանության բանակը, մեր հիասքանչ երիտասարդ սերունդը նույնպես առերեսվեցին նման մարտահրավերների հետ 44-օրյա պատերազմի ընթացքում: Եվ այսօր պետք է խոսել գիտատեխնոլոգիական առաջընթացի կարևորության մասին»,- ասաց Աշոտ Սաղյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահը նշեց, որ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքի ընդունումից հետո իրականացվում է գիտության զարգացման ռազմավարության էական փոփոխություն և դրա համատեքստում ՀՀ ԳԱԱ-ի կարգավիճակի և գործառույթների փոփոխություն: ՀՀ ԳԱԱ-ն պետական ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակից անցնում է հիմնադրամի կարգավիճակի: «ԳԱԱ-ն վարչակազմակերպչական կառույցից վերածվում է գիտամեթոդական և փորձագիտական կառույցի, որի գլխավոր առաքելությունը պետք է դառնան Հայաստանի Հանրապետության տարածքում գործող գիտահետազոտական ինստիտուտների, կենտրոնների և լաբորատորիաների գործունեության գնահատումը, բազային և այլ ծրագրերի արդիականության և միջազգային ստանդարտների համապատասխանության մշտադիտարկումը: ԳԱԱ-ի գործառույթների մեջ է մտնում նաև հրատարակչական գործունեությունը, որը մեր հրատապ խնդիրներից է: Մի շարք ամսագրեր մենք արդեն միավորել ենք ակադեմիայի «Զեկույցներ» հանդեսի ներքո, և խնդիր է դրված 1-2 տարում դրանք ներառել միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում, իսկ ապագա 5 տարիների ընթացքում դրանք հասցնել Q1 կամ առնվազն Q2 մակարդակի: Համոզված եմ, որ մենք արագ տեմպերով կհասնենք մեր նպատակին: ԳԱԱ-ի գործառույթներից են նաև գիտության հանրայնացումը, միջազգայնացումը, գրադարանային գործունեությունը, բարձրագույն որակավորման մասնագետների պատրաստմանը մասնակցությունը և հարակից այլ գործառույթներ: Կարելի է արձանագրել, որ Գիտությունների ազգային ակադեմիայի համար սկսվում է գործառույթների նոր շրջան: Եկեք կերտենք այն գիտությունը, որն ընդունակ է ապահովելու մեր ապագան՝ ի փառս պետության հզորացման»,- ասաց Աշոտ Սաղյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահը նշեց, որ թյուր են խոսակցությունները ԳԱԱ-ն փակելու, պետական ֆինանսավորումը դադարեցնելու, աշխատողներին ազատելու մասին: Նա ներկայացրեց հետագա քայլերը՝ նշելով, որ ԳԱԱ-ն մնում է հատուկ տողով պետության կողմից ֆինանսավորվող հիմնական ինքնավարության սկզբունքով կառավարվող կառույց:

Պատրաստվում է կառավարության որոշման նախագիծ ԳԱԱ-ի մասով հետևյալ բովանդակությամբ.

1-ին՝ ՀՀ ԳԱԱ ՈԱԿ-ի վերակազմավորում ՀՀ ԳԱԱ հիմնադրամի;

2-րդ՝ ՀՀ ԳԱԱ հիմնադրամի կանոնադրության հաստատում;

3-րդ՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հաստատումը որպես Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող պետական կառավարման լիազոր մարմին;

4-րդ՝ ՀՀ ԳԱԱ նախագահի պաշտոնակատարի նշանակում;

5-րդ՝ որոշումը ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ՀՀ ԳԱԱ-ի պետական գրանցում;

6-րդ՝ ՀՀ ԳԱԱ ՈԱԿ-ին ամրացված Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի հետհանձնում Պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինությանը և այն անորոշ ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով հանձնում ԳԱԱ հիմնադրամին;

7-րդ՝ 6-ամսյա ժամկետում ՀՀ ԳԱԱ հիմնադրամի հետ գույքի անհատույց օգտագործման պայմանագրի կնքում;

8-րդ՝ պետական գրանցումից հետո՝ եռամսյա ժամկետում, ԳԱԱ հոգաբարձուների խորհրդում ԳԱԱ նախագահության անհատական կազմի ներկայացումը ՀՀ վարչապետի հաստատմանը;

9-րդ՝ մինչև ԳԱԱ հոգաբարձուների խորհրդի ձևավորումը ԳԱԱ նախագահությունն իր գործունեությունը կշարունակի ԳԱԱ ՈԱԿ-ի նախագահության կարգավիճակով:

Կանոնադրությունը հաստատելուց հետո կիրականացվի ակադեմիայի թղթակից անդամների ընտրություն՝ թափուր տեղերի թվաքանակով: Թափուր տեղերի քանակը կորոշվի 100-ից հանած ակադեմիայի գործող անդամների թվով՝ այսօրվա դրությամբ մոտ 35 տեղ: Ըստ օրենքի՝ ԳԱԱ անդամների ընդհանուր թիվը 100-ն է: Ընտրությունները կանցկացվեն տարբեր մասնագիտություններով լիազոր մարմնի կողմից հաստատված կանոնակարգով և չափանիշներով: Քանի որ ընտրությունների նախաշեմին հոգաբարձուների խորհուրդը դեռևս ձևավորված չի լինի, առաջիկա ընտրությունների կարգը կհաստատվի լիազոր մարմնի կողմից, իսկ հետագա ընտրությունների ժամանակ կարգը կհաստատի հոգաբարձուների խորհուրդը: Իսկ ոչ ուշ քան մեկ տարվա ընթացքում կանցկացվի ԳԱԱ իսկական անդամների ընտրություն: Ընտրություններից հետո կհրավիրվի ընդհանուր ժողով, որը ԳԱԱ անդամների կազմից կընտրի հոգաբարձուների խորհրդի, նախագահության 8 անդամների՝ նախագահի ներկայացմամբ բաժանմունքի կողմից երաշխավորված թեկնածուներից: Մյուս 3 անդամներից 2-ին կներկայացնի լիազոր մարմինը, իսկ հոգաբարձուների խորհրդի նախագահը, ըստ օրենքի, հանրապետության նախագահն է: Ըստ օրենքի՝ հոգաբարձուների խորհրդի կազմը 11-ն է, որից 8-ը՝ Գիտությունների ազգային ակադեմիայի կողմից: Հաստատված հոգաբարձուների խորհուրդը կիրականացնի ԳԱԱ նախագահի ընտրություն, այնուհետև նախագահի ներկայացմամբ կհաստատվեն ակադեմիայի ղեկավար կազմը, կառուցվածքը, հաստիքացուցակը, գործունեության ուղղությունները: ՀՀ ԳԱԱ հիմնադրամի գրանցվելուց հետո ՈԱԿ-ի բոլոր աշխատակիցները կազատվեն աշխատանքից, քանի որ ՈԱԿ-ը, որպես այդպիսին, այլևս չի լինի, և կհրամանագրվեն հիմնադրամում ժամանակավոր պաշտոնակատարի կարգավիճակով մինչև ԳԱԱ նոր կառուցվածքի հաստատումը: Դա չի վերաբերում այն աշխատակիցներին, որոնց համար կլինեն օրենսդրական սահմանափակումներ:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն իր ելույթում ասաց. «Շատ ուրախ եմ, որ այս խոսակցությունն ունենում ենք «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքի ընդունումից և ուժի մեջ մտնելուց հետո: Մենք խոսում ենք մեր ընդհանուր առմամբ բարձրագույն կրթության և գիտության համակարգի վերաիմաստավորման և վերափոխման ճանապարհի մասին: Որպես այս ոլորտի լիազոր մարմնի պատասխանատու՝ ուզում եմ հավաստիացնել, որ ակադեմիայի նշանակությունը և կշիռը միայն ավելանալու են: Բացասական զարգացումներ մենք չենք ակնկալում: Հուսով եմ, որ հունվարի 1-ից ֆինանսավորման հետ կապված բոլոր հարցերը կփակվեն, և ֆինանսավորումը շարունակվելու է: Ինչ վերաբերում է գործառութային վերափոխումներին, դրանք սահմանված ընթացակարգերով տեղի կունենան: Վստահ եմ, որ առաջիկայում նոր անդամների

ընտրությունը և նոր ձևաչափով նախագահության ձևավորումը նոր լիցք և եռանդ կտան ակադեմիային իր նոր ծրագրերի իրականացման ճանապարհին»,- ասաց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը:

Նախարարը նշեց, որ կարևոր է ունենալ փորձագիտական, մշտադիտարկող, որակի վերահսկողություն իրականացնող և չափանիշներ սահմանող կառույց: «Այս իմաստով ակադեմիան ունի շատ կարևոր անելիք: Ուզում եմ հավաստիացնել, որ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն այստեղ էլ ակադեմիայի գործընկերն է»,- նշեց Ժաննա Անդրեասյանը:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, թղթակից անդամ Արթուր Իշխանյանն իր ելույթում կոչ արեց նոյեմբերի 10-ը հռչակել պետական տոն: «Անհրաժեշտ է խորհել անցած ուղու և ապագայի մասին, և այդ խորհելու թեման թելադրում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի այս տարվա խորագիրը՝ «Վստահություն, վերափոխում և ապագա. գիտություն, որն անհրաժեշտ է մեզ 2050 թվականին»: Մեզ անհրաժեշտ է խորհել գլոբալ մասշտաբով անելիքների մասին: Այս տեսանկյունից կարևոր է գիտակցել, որ գոյություն ունի պատմության արագացման օրենք: Դարաշրջանների տևողությունը մշտապես կրճատվել է, և եթե վաղնջական ժամանակներում պատմական դարաշրջանները ձգվել են հարյուր հազարավոր տարիներ, ապա հետագայում կրճատվելով հասել են 20-30 տարվա շեմին, ինչը հավասարվում է մարդու զարգացման կենսաբանական ժամանակին: Եվ քանի որ պատմական դա-

➤2

ՀՀ ԳԱԱ-ում նշվեց Հանուն խաղաղության և զարգացման գիտության համաշխարհային օրը և ՀՀ ԳԱԱ հիմնադրման օրը, տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ 2025 թ. մրցանակի պարգևատրման արարողությունը

➢1 ռաջրջանն այլևս կրճատվել չի կարող, 2050 թվականին մարդկությունը մոտենում է սինգուլյարության (եզակիության) կետի: Սա նշանակում է, որ մարդկության զարգացման ընթացքում տեղի է ունենալու արմատական փոփոխություն: Նկատենք, որ նախորդ դարաշրջանների հեղափոխական շրջադարձերը եղել են մարդկության ներսում՝ առանց մոլորակի գոյության սպառնալիքի: Այսօր մենք գործ ունենք միանգամայն այլ իրավիճակի հետ, երբ զարգացումը վտանգում է մոլորակի գոյությունն ընդհանրապես: Առաջ են եկել այնպիսի վտանգներ, ինչպիսիք են միջուկային և էկոլոգիական տեխնածին փոփոխությունները: Միաժամանակ առաջացել են նոր հնարավորություններ, ինչպիսիք են գենային ինժեներիան և արհեստական բանականությունը, որոնք ընդունակ են լուծելու մարդու հիվանդությունների խնդիրը,

երկարացնելու կյանքը: Զուգահեռ, այս նույն հնարավորությունները նոր ռիսկեր են առաջացնում: Կարող է տեղի ունենալ մարդ տեսակի դիխոտոմիա (երկճյուղում), երբ գենային ինժեներիայի կիրառմամբ մարդկանց մի մասը կվերածվի «խոնարհ մարդու», որը ոչնչի կարիք չունենա: Նույն գենային ինժեներիայի կիրառմամբ կարող է ստեղծվել նաև «գերմարդու» տեսակ:

Այսօր մարդկային գործունեության շատ ոլորտներ մենք հանձնում ենք արհեստական բանականությանը, և այդ արհեստական բանականությունը կարող է մի օր՝ տեսականորեն, սկսել գործել ինքնուրույն և որոշել, որ մարդն այլևս ավելորդ է այս մոլորակի վրա: Այս մասին ճիշտ նույն բառերով ասված է Ստիվեն Հոքինգի, Իլոն Մասկի և 150 այլ առաջատար գիտնականների՝ 2016 թվականին հրապարակած բաց նամակում: Նրանք զգուշացնում էին մարդկությանը հնարավոր արմատական փոփոխությունների մասին: Միաժամանակ նշում էին, որ այս մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ են ոչ միայն տեխնոլոգիական, այլև հումանիտար լուծումներ. մարդկային գիտակցությունն ու բարոյականությունը պետք է վերահսկեն տեխնոլոգիական հզորությունը: Այդ պատճառով խստորեն կարևորվում է հումանիտար ոլորտի զարգացման անհրաժեշտությունը: Գիտությունն է հանդիսանում և՛ խնդրի աղբյուրը, և՛ դրա լուծման հնարավոր բանալին: Այո՛, նոր վտանգները ծնվել են գիտությունից, բայց հենց գիտությունն է, որ ի վիճակի է դրանք հաղթահարելու»,- ասաց Արթուր Իշխանյանը:

Նա նշեց, որ առաջիկա 25 տարին բնութագրվելու է գլոբալ աշխարհակարգի փոփոխությամբ, ինչն այսօր արդեն իսկ տեղի է ունենում՝ պատերազմներով, ցավով, արյամբ: «Այն շարունակվելու է դեռ երկար տարիներ: Մեզ այն հիշեցնում է 20-րդ դարի դառը փորձը՝ Հայոց Ցեղասպանությունը, երբ աշխարհակարգի փոփոխության պահին մենք չկարողացանք դիմակայել մարտահրավերներին: Այսօր պետք է պատրաստ լինենք՝ գիտությամբ, գիտակցությամբ և միասնականությամբ: Բացի այդ, մենք նաև տեղային առանձնահատկություն ունենք. ագրեսիվ շրջապատ, ռեսուրսների ասիմետրիա մեր շրջապատի հետ, հետևաբար՝ մեզ անհրաժեշտ է ապավինել գիտությանը, մի ուժի, որն ավելի զորեղ է, քան նյութական ուժը, քան թվերը», - նշեց Արթուր Իշխանյանը:

Ըստ նրա՝ անհրաժեշտ է էապես արդիականացնել հետազոտական ուղղությունները, մասնավորապես վերածնել հումանիտար գիտությունը՝ առավելագույնս ուղղելով դեպի գլոբալ մարտահրավերների ուսումնասիրություն:

Արթուր Իշխանյանը դիմեց գիտնականներին. «Գիտնականը նաև քաղաքացի է: Այսօր յուրաքանչյուր գիտնական կոչված է ոչ միայն զարգացնելու իր մասնագիտական ոլորտը, այլև նպաստելու հանրային գիտակցության մեջ գիտության առաջնայնության և կենսական՝ գոյաբանական կարևորության ամրագրմանը:

Մեր դարաշրջանը մեզնից պահանջում է ոչ միայն գիտելիք, այլև պատասխանատվություն: Գիտությունը վաղուց դադարել է լինել միայն մասնագիտական գործ. այն դարձել է քաղաքակրթական պարտավորություն: Այս դարաշրջանը պահանջում է ոչ միայն գիտելիք, այլև պատասխանատվություն»:

Շնորհավորական խոսքով հանդես եկավ Հայաստանում ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ազգային հանձնաժողովի ղեկավար, գլխավոր քարտուղար Դավիթ Կնյազյանը: Նա շեշտեց գիտության դերը կայուն զարգացման գործում և գիտնականների դերն ազգային կարողությունների ձևավորման գործում: Դավիթ Կնյազյա-

նը նշեց, որ կարևոր նշանակություն ունեն գիտությունը և գիտական լուծումներն արժևորող ազգային և միջազգային միջոցառումները: Նա նշեց, որ 2026 թվականին Հայաստանում անցկացվելու է միջազգային ամենախոշոր միջոցառումներից մեկը՝ «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի Կողմերի 17-րդ համաժողովը (COP 17): Համաժողովի ընթացքում անցկացվելու է միջազգային գիտական ֆորում, որը կարող է դառնալ հարթակ՝ բարձրացնելու գիտական նվաճումների տեսանելիությունը:

Գիտության դերին հանրության զարգացման գործում և գիտության հանրայնացման խնդիրներին անդրադարձավ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայկ Սարգսյանը: Նա առանձնակի կարևորեց գիտական արդյունքների հանրամատչելի ներկայացումը, գիտահանրամատչելի միջոցառումների անցկացումը: «Գիտության ձեռքբերումների մասին պետք է խոսեն հենց իրենք՝ գիտնականները, այն մարդիկ, ովքեր զբաղվում են դրանով,- ասաց Հայկ Սարգսյանը,- գիտությունը մի գործընթաց է, որը պետք է նախևառաջ ապահովի լավ, կայուն և պինդ դպրոց: Եթե պետությունն ունի գիտություն, ուրեմն ունի լավ դասախոսներ, հետևաբար՝ կլինեն լավ ուսանողներ և լավ ուսուցիչներ: Իսկ ուժեղ դպրոցը

կիրթ հասարակության հիմքն է»:

Տոնական միջոցառման շրջանակում անցկացվեց «ՀՀ ԳԱԱ 2025 թ. մրցանակ» մրցույթի հաղթողների պարգևատրման արարողությունը:

Ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների հիմնարար հետազոտությունների բնագավառում մրցանակը շնորհվեց Տիգրան Մաղաքյանին և Տիգրան Մովսիսյանին՝ «Աստղերի զարգացման վաղ փուլերում էրուպտիվ ակտիվության դրսևորումները» աշխատանքի համար:

Ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների կիրառական մշակումների բնագավառում մրցանակը շնորհվեց Գագիկ Այվազյանին՝ «Սև սիլիցիումի ստացումը, հետազոտումը և կիրառումը միկրոէլեկտրոնային սարքերում» աշխատանքի համար:

Քիմիայի, կյանքի և Երկրի մասին գիտությունների հիմնարար հետազոտությունների բնագավառում մրցանակը շնորհվեց Արամ Պետրոսյանին, Վահրամ Ղազարյանին, Գայանե Տոնոյանին, Ձերալդ Գիստերին, Մարեկ Շաֆրանսկուն՝ «Ամինոթթուների նոր աղեր, աղերի նոր դասի բացահայտում և դրանց հնարավոր կիրառությունը» աշխատանքի համար:

Քիմիայի, կյանքի և Երկրի մասին գիտությունների կիրառական մշակումների բնագավառում մրցանակը շնորհվեց Սուրեն Խառատյանին՝ «Ջերմային անալիզի նոր սերնդի սարքավորման նախագծում, պատրաստում և շահագործում (Արագագործ Ջերմաստիճանային Սկաներ)» աշխատանքի համար:

Հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառում մրցանակը շնորհվեց Արամ Քոսյանին և Երվանդ Գրեկյանին՝ «Հայկական լեռնաշխարհի միջավայրային պատմությունը. շրջակա միջավայր, կլիմայական փոփոխություններ և քաղաքակրթական գործընթացներ» աշխատանքի համար:

Բժշկագիտության բնագավառում մրցանակը շնորհվեց Ասատուր Ասատրյանին, Հայրապետ Բարսեղյանին, Արայիկ Ոսկանյանին, Հայկ Հարությունյանին, Անահիտ Հախեյանին՝ «Կենդանի դոնորից լյարդի փոխպատվաստման ներդրումն ու զարգացումը Հայաստանում. առաջին քայլերից դեպի կայուն մասնագիտական ծրագիր» աշխատանքի համար:

Տեղի ունեցավ նաև Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական պետական մրցանակի դրամական միջոցների շրջանակում հայտարարված մրցույթի հավաստագրերի և «Գիտության աշխարհում» հանդեսի 20-ամյակի առթիվ ակտիվ հեղինակներին շնորհակալագրերի հանձնման արարողությունը:

Միջոցառման շրջանակում նաև անցկացվեց գիտական նստաշրջան: Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, պրոֆեսոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Վալերի Տուչինը հանդես եկավ «Կենսաբժշկական օպտիկական պատկերման և լուսաթերապիայի խնդիրների լուծման նորարարական մոտեցումներ» թեմայով գիտական զեկուցմամբ: ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի էքոնոգենոմիկայի լաբորատորիայի վարիչ, պրոֆեսոր Լևոն Եպիսկոպոսյանը ներկայացրեց «Ծագումից մինչև ինքնություն. հայերի գենետիկական ուղին» թեմայով զեկուցումը: ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Արսեն Բոբոխյանը հանդես եկավ «Վիշապաքարերը նորագույն հնագիտական հետազոտությունների լույսի ներքո» թեմայով զեկուցմամբ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2025 թվականի սեպտեմբերի 11-ին

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 9. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան

1. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա) Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Կառավարության, հիմնադրած ինքնակառավարվող հիմնադրամ է, որն իր կազմում միավորում է Ակադեմիայի անդամներին (ակադեմիկոսներին և ասոցացված անդամներին), Ակադեմիայի գիտական բաժանմունքները, Ակադեմիայի աշխատակազմը, Ակադեմիայի պատվավոր և արտասահմանյան անդամներին և հանրային գիտական կազմակերպությունների պատվավոր առաջատար և պատվավոր գլխավոր գիտաշխատողներին:

2. Ակադեմիան իր գործունեությունն իրականացնում է ինքնակառավարման իրավունքի լիարժեք իրացման միջոցով՝ Ակադեմիայի ինքնավարության, որոշումների ընդունման կոլեգիալության, մասնակցայնության, անկախության ու օբյեկտիվության սկզբունքներով՝ նպատակ ունենալով ապահովելու պետության և հասարակության համար վստահելի գիտական խորհրդատվության տրամադրումը, միջազգային գիտական համագործակցության զարգացումը և գիտական արդյունքների հանրահռչակումը:

3. Ակադեմիայի գործունեության ինքնավարությունն իր կառուցվածքն ու փորձագիտական գործառույթներն ինքնուրույն սահմանելու, գիտատեխնոլոգիական գործունեության արդյունավետության և արդյունքների գնահատման ձևերն ու մեթոդներն ինքնուրույն որոշելու, միջազգային գիտական համագործակցության ուղղություններն ու եղանակներն ինքնուրույն ընտրելու և ֆինանսական ռեսուրսներն ինքնուրույն կառավարելու իրավասությունն է:

4. Ակադեմիայի կանոնադրությունը, ներառյալ կառավարման և գործունեության առանձնահատկությունները և Ակադեմիայի անդամների ընտրության կարգը, հաստատում է Կառավարությունը: Ակադեմիայի ասոցացված անդամ և ակադեմիկոս կարող են ընտրվել Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող այն գիտնականները, որոնք առնվազն համապատասխանում են գիտական և ճարտարագիտատեխնիկական կադրերի ատեստավորման կարգով համապատասխանաբար առաջատար և գլխավոր գիտաշխատողի տարակարգի համար սահմանված պահանջներին: Հավելյալ պահանջներ սահմանվում են մրցույթի կազմակերպման կարգով, որը Ակադեմիայի ներկայացմամբ հաստատում է Լիազոր մարմինը: Ակադեմիայի անդամների առավելագույն քանակը 100 է:

5. Ակադեմիայի կառավարման մարմիններն են՝

1) Ակադեմիայի ընդհանուր ժողովը.

2) Ակադեմիայի հոգաբարձուների խորհուրդը՝ Ակադեմիայի նախագահությունը.

3) Ակադեմիայի կառավարման գործադիր մարմինը՝ Ակադեմիայի նախագահը:

6. Ակադեմիայի ընդհանուր ժողովում ընդգրկվում են Ակադեմիայի անդամները, ինչպես նաև հանրային գիտական կազմակերպությունների պատվավոր առաջատար և պատվավոր գլխավոր գիտաշխատողներից ներկայացուցիչներ, որոնց առաջադրման կարգը սահմանվում է Ակադեմիայի կանոնադրությամբ:

7. Ակադեմիայի նախագահությունը բաղկացած է տասնմեկ անդամից, որի անվանական կազմը հաստատում է հիմնադիր մարմնի ղեկավարը:

8. Ակադեմիայի նախագահությունը գլխավորում է Հանրապետության նախագահը: Նախագահության անդամներից երկուսին առաջադրում է Կառավարությունը: Նախագահության մյուս անդամներն ընտրվում են Ակադեմիայի անդամներից՝ ընդհանուր ժողովի կողմից՝ հինգ տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Ակադեմիայի նախագահության անդամ:

9. Ակադեմիայի նախագահությունն Ակադեմիայի ակադեմիկոսների թվից ընտրում է Ակադեմիայի նախագահին՝ հինգ տարի ժամկետով: Ընտրության արդյունքները հաստատում է Կառավարությունը: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Ակադեմիայի նախագահ:

10. Հանրային գիտական կազմակերպություններում ատեստավորման արդյունքով պատվավոր առաջատար և պատվավոր գլխավոր գիտաշխատողների հետագա վարձատրությունն իրականացվում է Ակադեմիայի միջոցով: Պատվավոր առաջատար և պատվավոր գլխավոր գիտաշխատողների մասնակցությունը Ակադեմիայի գործունեությանը սահմանվում է Ակադեմիայի կանոնադրությամբ:

11. Ակադեմիայի գործունեության հիմնական ուղղություններն են՝

1) հետազոտությունների գերազանցության խրախուսումը՝ քննարկումների և համաժողովների կազմակերպմամբ.

2) հայագիտական հետազոտություններին աջակցումը.

3) գիտատեխնոլոգիական գործունեության բազային և պետական այլ նախագծերի փորձաքննությանը և ծրագրերի մշտադիտարկմանը մասնակցությունը՝ Կառավարության սահմանած կարգով.

4) Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի վերաբերյալ տարեկան և հնգամյա պարբերականությամբ զեկույցների պատրաստումն ու հրապարակումը՝ Լիազոր մարմնի սահմանած կարգով և չափանիշներով.

5) Կառավարությանը և հասարակությանը գիտականորեն հիմնավորված խորհրդատվության տրամադրումը.

6) գիտական ամսագրերի հրատարակումը.

7) գիտական մշակույթի տարածումը, գիտաչափական և գիտական-գրադարանային արդի ծառայությունների մատուցումը, գիտատեխնոլոգիական գործունեության արդյունքի նկատմամբ վստահության ձևավորումը.

8) գիտության հանրայնացման միջոցառումների իրականացումը, այդ թվում՝ սովորողների շրջանում գիտատեխնոլոգիական գործունեության ներկայացման և հետազոտությունների նկատմամբ հետաքրքրության ձևավորման ծրագրերի միջոցով.

9) միջգիտակարգային երկխոսության ապահովումը.

10) հանրային և համամարդկային նշանակության գիտական խնդիրների բացահայտումը.

11) ոլորտային քաղաքականությունների խորհրդատվության տրամադրումը գիտականորեն կշռադատված, անկախ և թափանցիկ եղանակով՝ ապահովելով գիտական արդյունքի փոխարկումը հանրային և համամարդկային արժեքի:

12. Ակադեմիան իր առաքելությամբ սահմանված գործառույթների իրականացման համար կարող է ձևավորել մասնագիտական (պրոբլեմային) խորհուրդներ՝ ներգրավելով ինչպես Ակադեմիայի կազմի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության գիտական կամ կրթական կազմակերպությունների կամ օտարերկրյա, այդ թվում՝ Սփյուռքի գիտնականների:

13. Ակադեմիան, որպես հիմնադրամ, իր առաքելությամբ սահմանված գործառույթների իրականացման համար կարող է դիմել ոլորտը ֆինանսավորող տարբեր մասնագիտացված կառույցների, այդ թվում՝ միջազգային:

14. Ակադեմիայի պահպանման համար հատկացվող պետական ֆինանսավորումը տրվում է որպես առանձին բյուջետային միջոցառում՝ բազային ֆինանսավորման ծրագրի կազմում:

15. Ակադեմիան իր կանոնադրական նպատակների իրականացման համար կարող է ֆինանսավորվել պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

16. Ակադեմիան իրեն հատկացված պետական ֆինանսավորման և ցանկացած այլ ֆինանսական մուտքերի և ծախսերի մասով կանոնադրությամբ սահմանված կարգով հաշվետու է Լիազոր մարմնին և հանրությանը:

17. Ակադեմիայի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձի լիազորությունները դադարեցվում են, եթե լրացել է նրա 75 տարին: Ակադեմիայի ղեկավար պաշտոնների ցանկը սահմանվում է Ակադեմիայի կանոնադրությամբ: Ակադեմիայի անդամներին գիտատեխնոլոգիական գործունեության առնվազն 30 տարվա ստաժի առկայության և 75 տարին լրանալու դեպքում հատկացվում է ամենամսյա դրամական վճար՝ Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձի կրկնակի չափով՝ ասոցացված անդամների համար, և եռակի չափով՝ ակադեմիկոսների համար:

18. Ակադեմիան յուրաքանչյուր տարի իր կանոնադրությամբ սահմանված կարգով կազմակերպում է տարեկան գիտաժողով, որի ժամանակ հանրային գիտական կազմակերպությունները ներկայացնում են իրենց գիտատեխնոլոգիական գործունեության ուղղությամբ հաշվետվությունները: Նստաշրջանի արդյունքներով Ակադեմիան գնահատում է ներկայացված հաշվետվությունները և եզրակացությունը ներկայացնում է Լիազոր մարմին՝ որպես գիտական կազմակերպությունների արտաքին գնահատման բաղադրիչ:

Հասարակական և հումանիտար բնագավառում 2025 թ. ՀՀ ԳԱԱ մրցանակակիրները

Այս բնագավառում ՀՀ ԳԱԱ 2025 թ.մրցանակին են արժանացել պատմական գիտությունների դոկտորներ Արամ Քոսյանը և Երվանդ Գրեկյանը՝ «Հայկական լեռնաշխարհի միջավայրային պատմությունը. շրջակա միջավայր, կլիմայական փոփոխություններ և քաղաքակրթական գործընթացներ (Ք.ա. X-I հազարամյակներ)» աշխատության համար:

Կոլեկտիվ մենագրությունը հայագիտության մեջ առաջին միջգիտակարգային ուսումնասիրությունն է, որտեղ փորձ է կատարվել Հայկական լեռնաշխարհի Ք.ա. X-I հազարամյակների պատմությունը դիտարկել շրջակա միջավայրում տեղ գտած երկարաժամկետ և կարճաժամկետ կլիմայական փոփոխությունների լույսով:

Նման ուսումնասիրություն Հայկական լեռնաշխարհի, ինչպես և երկրագնդի առանձին տարածաշրջանների համար ներկայումս բացակայում է: Հեղինակները որպես սկզբնաղբյուր լայնորեն օգտագործել են հասարակական (գրավոր աղբյուրների և հնագիտական հետազոտությունների տվյալներ) և բնական (կլիմայաբանություն, երկրաբանություն, ջրաբանություն, դենդրոխրոնոլոգիա, աշխարհագրություն, ռելիեֆ և այլն) գիտությունների տվյալները: Աշխատությունը հենվում է երկրագնդի կլիմայական պատմության՝ համընդհանուր ընդունելություն ստացած փուլաբաժանման վրա:

Սկզբնաղբյուրների նման լայն ընդգրկումը թույլ է տվել պարզել այս կամ այն խոշոր ժամանակահատվածի ընթացքում տիրող կլիմայական պայմանները, որոնք հասարակության կենսագործունեության վրա շատ դեպքերում վճռական ազդեցություն ունեն: Այն արտահայտվում է պետականությունների կենսագործունեության բոլոր ոլորտների վրա

(տնտեսական և քաղաքական ճգնաժամ, սոցիալական ընդվզումներ, պետականության անկում, բնակչության լայնամասշտաբ տեղաշարժեր և այլն): Շրջակա միջավայրում տեղ գտած նման երևույթները հեռավոր անցյալում հաճախ դարձել են պետությունների քաղաքական և տնտեսական կառույցի քայքայման և վայրընթաց զարգացման հիմնական պատճառ: Այդպիսի օրինակները բազմաթիվ են ինչպես հնագույն շրջանում, այնպես էլ միջնադարում և նույնիսկ ավելի ուշ ժամանակներում (Հին Եգիպտոսը Ք.ա. XXIII-XXII դարերում, Խեթական տերությունը Ք.ա. XIII դարում, Վանի թագավորությունը Ք.ա. VII դարում, Կենտրոնական Ամերիկայի մայաների քաղաք-պետությունները Ք.հ. X դարում և այլն):

Հայկական լեռնաշխարհի հնագույն շրջանի պատմության վրա շրջակա միջավայրի ազդեցությունն ուսումնասիրվում է երկրագնդի տարբեր տարածաշրջաններում, մասնավորապես հյուսիսային կիսագնդի տարբեր շրջաններում վկայված համաժամանակյա իրողությունների լայն հետնախորքի վրա: Նման մոտեցումը խնդրին թույլ է տալիս եզրակացնել, որ մեր տարածաշրջանում վկայված ճգնաժամային փուլերը տեղական նշանակության մեկուսացած երևույթներ չեն եղել, այլ ընդգրկել են երկրագնդի բոլոր շրջաններն անխտիր:

Ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում միջգիտակարգային մոտեցում ցուցաբերելու Հայկական լեռնաշխարհի պատմության առայժմ անբավարար լուսաբանված իրադարձությունների նկատմամբ և մեկնաբանելու մեր տարածաշրջանի հնագույն հասարակությունների պատմության խնդիրները շրջակա միջավայր-հասարակություն անխզելի կապի միջոցով: Այդպիսի խոշոր իրադարձություններից են. **ա.** Ք.ա. IV-III հազարամյակներում Հայկական լեռնաշխարհում գոյություն ունեցած Կուր-արաքսյան մշակույթի անկումը և դրան հաջորդած լայնամասշտաբ էթնիկ տեղաշարժերը Հայկական լեռնաշխարհից դեպի Փոքր Ասիա, Սիրիա-Պաղեստին և Ուրմիա լճի ավազան, **բ.** Ք.ա. III հազ. կեսերից Հայկական լեռնաշխարհում հայտնված այսպես կոչված «Կուրգանային մշակույթը» և սիրիա-պաղեստինյան տարածաշրջան, **գ.** Վանի թագավորության անկումը և այլ խնդիրներ:

Ուսումնասիրությունն իրականացվել է ՀՀ բարձրագույն կրթության և գիտության պետական կոմիտեի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում (ծածկագիր 20TTSH-005):

Հետազոտության առանձին հատվածներ (շուրջ 20) նախքան գրքի լույս տեսնելը հոդվածների տեսքով տարբեր լեզուներով հրատարակվել են արտերկրի և ՀՀ գիտական պարբերականներում:

«Պատմական հիշողությունը ԱՊՀ տարածքում». միջազգային գիտաժողով Մոսկվայում

Ս/թ. նոյեմբերի 5-6-ին Մոսկվայում տեղի ունեցավ ՌԴ ԳԱ ընդհանուր պատմության ինստիտուտի, Ռուսաստանյան պատմական ընկերության, Ռուսաստանյան խաղաղության հիմնադրամի, ԱՊՀ մասնակից-պետությունների հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի, ԱՊՀ մասնակից-պետությունների պատմաբանների և արխիվիստների միջազգային ասոցիացիայի (հանձնաժողովի) կողմից համատեղ կազմակերպված «Պատմական հիշողությունը ԱՊՀ տարածքում. ձևավորումն ու զարգացման միտումները» խորագրով միջազգային գիտաժողովը: Դրա աշխատանքներին մասնակցեցին ԱՊՀ ութ պետությունների ներկայացուցիչներ ՌԴ-ից, Բելառուսից, Ադրբեջանից և Կենտրոնական Ասիայի բոլոր երկրներից: Հայաստանից գիտաժողովի աշխատանքներին մասնակցեցին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ա. Մելքոնյանը և ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ.գ.թ. Ռ. Ազիզբեկյանը:

Առաջին օրը գիտաժողովի մասնակիցներին ողջունեցին ՌԴ նախագահի միջազգային մշակութային համագործակցության հարցերով հատուկ ներկայացուցիչ Մ. Շվիդկոյը, ՌԴ ԳԱ ընդհանուր պատմության ինստիտուտի գիտական ղեկավար, ԱՊՀ մասնակից-պետությունների պատմաբանների և արխիվիստների միջազգային ասոցիացիայի (հանձնաժողովի) նախագահ, Ռուսաստանյան պատմական ընկերության համանախագահ, ՌԴ ԳԱ ակադեմիկոս Ա. Չուբարյանը, ՌԴ ԳԱ ընդհանուր պատմության ինստիտուտի տնօրեն, ՌԴ ԳԱ թղթակից անդամ Մ. Լիպկինը և ուրիշներ: Գիտաժողովի բացումից անմիջապես հետո կայացավ հետխորհրդային տարածքի պատմաբանների (այդ թվում՝

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի) հեղինակած «Խորհրդային Միության ժողովուրդները և Մեծ հաղթանակը. 1941-1945 թթ.» կոլեկտիվ աշխատության շնորհանդեսը: Այդ արժեքավոր գրքի Հայաստանին նվիրված բաժնի հեղինակն է մեր ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պ.գ. դոկտոր Կ. Հարությունյանը:

Գիտաժողովում ակադեմիկոս Ա. Մելքոնյանը հանդես եկավ «Հայաստանը Ռուսական կայսրությունում և Խորհրդային Միությունում. ընդհանուր անցյալ» զեկուցմամբ, որն արժանացավ հատկապես ռուսաստանյան կողմի բարձր գնահատականին: Հատկանշական էր, որ Ադրբեջանի ԳԱ պատմության և էթնոլոգիայի ինստիտուտի փոխտնօրենն ու բաժնի վարիչը հանդես եկան, ըստ երևույթին, նախօրոք մշակված մարտավարության համաձայն: Եթե առաջինն իր ելույթում ընդհանրապես չանդրադարձավ Լեռնային Ղարաբաղին և հայ ժողովրդին, ապա երկրորդը հաջորդ օրը իր զեկուցման մեջ, անդրադառնալով նաև ղարաբաղյան առաջին պատերազմին, հպանցիկ նշեց իբր հայերի իրականացրած ադրբեջանական ժողովրդի ցեղասպանության մասին: Գիտաժողովի ավարտին այդ սադրիչ հայտարարությանն անառարկելի փաստերով և գիտական հիմնավորումներով պատասխան տվեց Ա. Մելքոնյանը: Ուշագրավ էր, որ գիտաժողովի կազմակերպիչներն ադրբեջանական կողմին թույլ չտվեցին բանավեճ ծավալել հայ պատմաբանի հայտարարության շուրջ:

Ընդհանուր առմամբ գիտաժողովը բավականին հագեցած էր թե՛ գիտական և թե՛ գործնական առումներով: Մասնավորապես այն հնարավորություն ընձեռեց անմիջական շփումներ ունենալու ԱՊՀ գործընկերների հետ և քննարկելու հետխորհրդային պատմագիտության կարևոր հիմնախնդիրների զարգացման միտումները: Գործնական առումով գիտաժողովի գրեթե բոլոր մասնակիցները միակարծիք էին գիտական կապերի հետագա շարունակականության և ամրապնդման անհրաժեշտության հարցում:

Գիտաժողովի շրջանակներում ՌԴ ԳԱ ընդհանուր պատմության ինստիտուտի տնօրեն Մ. Լիպկինն ընդունեց իր հայ գործընկերներին: Կայացած ջերմ զրույցի ընթացքում երկուստեք պայմանավորվածություն ձեռք բերվեց 2026 թ. գարնանը Երևանում վերաստորագրել ՀՀ ԳԱԱ պատմության և ՌԴ ԳԱ ընդհանուր պատմության ինստիտուտների միջև գործող համագործակցության մասին համաձայնագիրը:

Ռուբեն ԱԶԻԶԲԵԿՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

Ռազմական հանցագործության «աղվանականացման» սրբագրումը

Բաքվում հոկտեմբերի 9-ին անցկացվել է «Անհետ կորած անձանց հարցի լուծման համար ջանքերի համատեղում և համագործակցության ընդլայնում» խորագրով միջազգային համաժողով: Այնուհետև կազմակերպվել է կոնֆերանսի մասնակիցների շրջայցը Արցախի տարբեր շրջաններ, այդ թվում՝ բռնազավթված Շուշի:

Մասնակիցները շրջել են քաղաքում, եղել են նաև Բաքվի կողմից 44-օրյա պատերազմի ընթացքում հրթիռակոծված Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցում:

Ադրբեջանական լրատվամիջոցների կողմից հրապարակված հայկական եկեղեցու լուսանկարներից պարզ է դառնում, որ Բաքուն կարծես թե ավարտել է այստեղ իրականացվող վերանորոգման կամայական աշխատանքները, քանի որ շինաշխատանքների հետքեր չեն երևում: Ըստ հրապարակված լուսանկարների՝ եկեղեցու գմբեթի խաչը հանված է:

Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում՝ հոկտեմբերի 8-ին, եկեղեցին երկու անգամ թիրախային հրթիռակոծության էր ենթարկվել ադրբեջանական զինված ուժերի կողմից:

Միջազգային *Human Rights Watch (*HRW) իրավապաշտպան կազմակերպությունը զեկույց էր հրապարակել Սուրբ Ամենափրկիչի հրթիռակոծության մասին՝ այն որակելով որպես «հնարավոր պատերազմական հանցագործություն»:

«Եկեղեցուն հասցված երկու հարվածները (2-րդի ժամանակ տեղում եղել են լրագրողներ ու քաղաքացիական անձինք) թվում են կանխամտածված: Այդ հարվածները պետք է անաչառ հետաքննվեն, իսկ մեղավորները պետք է պատասխանատվության ենթարկվեն»,- ասել է «HRW»-ի Եվրոպայի ու Կենտրոնական Ասիայի տնօրեն Հյու Ուիլիամսոնը:

Պատերազմից հետո Բաքուն հայտարարել էր, թե սկսել է եկեղեցու «ռեստավրացիան», որն իրականացվում էր կամայական ու տարօրինակ՝ առանց հայկական կողմի և միջազգային որևէ կառույցի համաձայնության ու ներգրավվածության:

Ավելին, ադրբեջանցի պաշտոնյաները եկեղեցին ներկայացնում էին որպես «աղվանական» ու բացահայտ հայտարարում Արցախի տարածքներում հայկական կրոնական ժառանգությունն ավերելու ու ինքնությունը փոխելու մասին:

Դեռևս 2022 թվականի փետրվարին Ադրբեջանի մշակույթի նախարար Անար Քերիմովը հայտարարել էր, որ պատմության ու ճարտարապետության մասնագետների աշխատանքային խումբ է ստեղծվել՝ հայկական գրությունների հետքերը վերացնելու համար:

«Մենք դիտարկել ենք այդ վայրերն աշխատանքային խմբի անդամների հետ, ստուգումից հետո կորոշենք մեր հաջորդ քայլերը: Այդ վայրերը դեռ լիովին անվտանգ չեն: Տարածքների ականազերծումից հետո մենք տեղական ու միջազգային փորձագետներին կտանենք այնտեղ, կփաստագրենք հայկական կեղծիքն ու փոփոխությունները և կներկայացնենք միջազգային հանրությանը»,- ասել էր Քերիմովը:

Իր հերթին Հայաստանի Հանրապետության ԱԳՆ-ն դատապարտել էր Քերիմովի հայտարարությունն ու «Ադրբեջանի վերահսկողության ներքո հայտնված հայկական կրոնական ու պատմամշակութային կոթողներն ավերելու և ինքնությունը փոխելու նպատակով աշխատանքային խմբի ստեղծումը»: «Հարևան ժողովրդի պատմամշակութային ժառանգությունը միտումնավոր ու ապօրինի յուրացնելու և նրան պատմական հիշողությունից զրկելու նպատակով պետական մակարդակով նման կառույցի ստեղծումն աննախադեպ է անգամ հակամարտությունների պատմության համար: Այն ևս մեկ անգամ վկայում է, որ 44-օրյա պատերազմի ընթացքում և հաջորդած ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղում հայկական պատմամշակութային և կրոնական ժառանգության նկատմամբ վանդալիզմի և ոչնչացման դեպքերը կրում են միտումնավոր ու ծրագրված բնույթ և Լեռնային Ղարաբաղն իր բնիկ հայ բնակչությունից զրկելու քաղաքականության մաս են կազմում»,- ասվել էր ՀՀ ԱԳՆ մեկնաբանությունում:

Բաքվի կողմից կազմակերպված միջազգային համաժողովը, ինչպես նաև դրա շրջանակում իրականացված շրջայցն Արցախի բռնազավթված տարածքներ, մասնավորապես Շուշի քաղաք, վկայում են Ադրբեջանի կողմից մշակված քաղաքական ռազմավարության մասին՝ ուղղված Արցախի հայկական պատմամշակութային ժառանգության վերածնմանն ու ժխտմանը: Պատմության և մշակույթի քաղաքական շահարկմամբ Ադրբեջանի պաշտոնական հայտարարությունները եկեղեցին «աղվանական» ներկայացնելու և «հայկական կեղծ հետքերը» վերացնելու մասին ոչ միայն խախտում են միջազգային իրավունքի նորմերը, այլև նպատակ ունեն ջնջելու հայկական ինքնության հետքերն Արցախում:

«Գեղարդ» գիտավերլուծական
հիմնադրամ, 10.11.2025

Հնագետների հայ-գերմանական արշավախումբը հայտնաբերել է Հայաստանի ամենահին եկեղեցու հիմնապատերը

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Գերմանիայի Մյունստերի համալսարանի հնագետների արշավախումբը Հայաստանի անտիկ շրջանի մայրաքաղաք Արտաշատում բացահայտել է Հայաստանի՝ առ այսօր հայտնի ամենահին եկեղեցու հիմնապատերը: Եկեղեցին գտնվել է Հին Արտաշատի 17-րդ բլրի արևելյան լանջին և զբաղեցնում է մոտ 1000 քմ մակերես:

«Ըստ ստացված ռադիոածխածնային տվյալների՝ այս կառույցը վերաբերում է IV դարի առաջին կեսին ու փաստորեն Հայաստանի հնագիտորեն փաստագրված վաղագույն եկեղեցին է»,- ասում է արշավախմբի ղեկավար, Հնագիտության և ազգագրության

ինստիտուտի Հին Հայաստանի հնագիտության բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու Մկրտիչ Զարդարյանը:

Բացահայտումը կարևոր վկայություն է Հայաստանում վաղ քրիստոնեության մասին: «Հայտնագործության հիմնարար նշանակությունն այն է, որ էապես լրացնում է Հայաստանում քրիստոնեության տարածման մեխանիզմների և վաղագույն հոգևոր կառույցների ճարտարապետության մասին մեր պատկերացումները»,- ասում է Մկրտիչ Զարդարյանը:

Սա առաջին ութանկյուն եկեղեցին է, որը հայտնաբերվել է Հայաստանում: «Ութանկյուն, չորս խաչաձև ելուստներով եկեղեցիներն այստեղ մինչ այժմ հայտնի չէին, սակայն մենք ծանոթ ենք դրանց Արևելյան Միջերկրականի տարածաշրջանից, որտեղ նման կառույցներն ի հայտ են գալիս հենց մ.թ. IV դարից ի վեր»,- նկատում է Մկրտիչ Զարդարյանը:

Եկեղեցին կառուցված է եղել կրաշաղախով ամրացված տեղական քարից և, ամենայն հավանականությամբ, ունեցել է հարթ, սվաղված պատեր: Պատերը տարբեր բարձրությամբ են պահպանվել, որոշ հատվածներում հասնում են 2.6 մետրի, որոշ տեղերում՝ մոտ կես մետրի: Գտածոների տեսականին ու որակն ուսումնասիրելով՝ հնագետները եզրակացրել են, որ եկեղեցին կղմինդրածածկ է եղել և ունեցել է շքեղ ներքին հարդարանք: Այդ մասին են վկայում այստեղ հայտնաբերված փոքրասիական մարմարից պատրաստված պատերի երեսպատման բազմաքանակ սալերը և տարատեսակ քանդակազարդ բեկորները:

Աշխատանքն իրականացվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի «Արտաշատը՝ Անտիկ Հայաստանի մշակութային, տնտեսական և սոցիալական համակարգում» բազային թեմայի և Գերմանական հետազոտական հիմնադրամի (DFG) Artaxata Project-ի շրջանակում:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության
և հանրային կապերի բաժին

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ - 140



ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԸ բացառիկ դեմք է 20-րդ դարի հայ պոեզիայի պատմության մեջ: Նա հեղաշրջեց գեղարվեստական մտածողությունը՝ բերելով նոր աշխարհայացք, պատկերային նոր համակարգ, նոր գրական լեզու, չափածո խոսքի ներդաշնակության միանգամայն նոր արվեստ: Նա անսահման նրբություն և երաժշտականություն հաղորդեց բանաստեղծությանը և միանգամայն նոր կյանք պարգևեց գրականությանը: Նրանից հետո այլևս հնարավոր չէր գրել անցյալի գրողների նման:

Վահան Տերյանը (Տեր-Գրիգորյան) ծնվել է 1885 թ. փետրվարի 9-ին Ջավախքի Գանձա գյուղում: Նրա նախնիները 1830-ին Ջավախքում վերաբնակություն էին հաստատել Կարինի Կարճնկոց գյուղից: Տոհմագրությունն սկսվում է Տեր Ղազարից, նրա որդի Գրիգորից, որի որդին՝ Սուքիասը (1840-1914), ապագա բանաստեղծի հայրն էր:

Տեր-Սուքիասը 1850-1859 թթ. ուսանել է Ախալքալաքի հոգևոր դպրոցում: Ուսման տենչն այնքան ուժեղ էր նրա մեջ, որ այդ նպատակով ծնողներից գաղտնի որոշում է ոտքով հասնել… Փարիզ, ապա կրթություն ստանալ Մուրատ-Ռափայելյան վարժարանում: Սակայն հոր ուղարկած մարդիկ Կարինի գյուղերից մեկում գտնում են նրան և ետ վերադարձնում: Հայրը՝ Գրիգորը, ազատամիտ Սուքիասին ամուսնացնում է հարևան Չամդուրա գյուղի տիրացուի աղջկա՝ Յուղաբերի հետ: Սուքիասը դառնում է քահանա և շարունակում հոր սկսած եկեղեցու շինարարությունը: Սակայն նրա ուսումնատենչությունը չի անցնում: Ինքնուրույն սովորում է ռուսերեն, ֆրանսերեն. կարդում է հատկապես փիլիսոփայական, գիտական գրականություն, որպեսզի չկտրվի ժամանակի գրական, քաղաքական ու մտավոր անցուդարձից: Մայրը նուրբ, զգայուն և աշխատասեր կին էր:

Ըստ հուշագիրների՝ ապագա բանաստեղծն ավելի նման էր Թորոս հորեղբորը: Վերջինս, ինքնուս լինելով, տարված էր Գյոթեի «Երիտասարդ Վերթերի տառապանքները» գրքով, որը շարունակ կարդում էր և հուզմունքից արտասվում: Նաև բանաստեղծություններ էր գրում: Ահա գրի, գրքի հանդեպ ունեցած այս վերաբերմունքն է, որ հորից ու հորեղբորից փոխանցվում է Տերյանին:

Վահանը չորս եղբայրներից և չորս քույրերից կրտսերն էր: Փոքրիկը հանդարտ երեխա էր՝ բոլորից սիրված: Գրագիտության առաջին դասերն ստանում է հոր ու եղբայրների խնամքի ներքո: Նրա մանկությունն անցել է Ջավախքի անկրկնելի բնաշխարհում, նահապետական բարքերի մեջ:

Տերյանը նախնական կրթությունն ստացել է Գանձայում և Ախալքալաքում: 1897 թ. հայրը նրան տեղափոխում է Թիֆլիս, որտեղ երկու տարի ուսանում է պետական գիմնազիայում: Սակայն տեր Սուքիասը նրան ավելի մեծ ասպարեզ էր ուզում հանել, և 1899-ից Տերյանը դառնում է Մոսկվայի Լազարյան ճեմարանի սան՝ կրթությունը շարունակելով արևելյան լեզուների երրորդ դասարանում: Ճեմարանական ուսումնառության շրջանը (1899-1906) նրա մտավոր ձևավորման լավագույն ժամանակն է: Այս տարիներին անհագ հետաքրքրությամբ նա կարդում է ռուս և եվրոպական գրողներին, հաղորդակցվում գեղագիտական նոր ուղղություններին, գրական նոր դպրոցներին, որոնցից նրան հատկապես գրավում է խորհրդապաշտությունը:

Ընկերների հետ լույս է ընծայում ձեռագիր «Հույս» թերթը: Շվին և Volo ծածկանուններով հանդես է գալիս խմբագրական և առաջնորդող հոդվածներով: Այս տարիներին է վերաբերում նրա «Բայրոնի «Չայլդ Հարոլդը» և Սմբատ Շահազիզի «Լևոնի վիշտը» գրականագիտական վերլուծությունը: Իսկ ճեմարանի «Մեր կյանքը» աշակերտական ձեռագիր թերթում տպագրվում են Թումանյանի և Իսահակյանի ազդեցությամբ գրված նրա առաջին բանաստեղծությունները («Կարկուտը եկավ…», «Սարեր ու ձորեր…»): 1904-ին ճեմարանում ծանոթանում է Իսահակյանի, իսկ ավելի ուշ՝ 1908-ին՝ Թումանյանի հետ, որոնք նրա ստեղծագործական ձևավորման գործում ունենում են նշանակալի տեղ:

1905-ի ամռանը հայրենի բնաշխարհում՝ Սաղամո լճի ափին, Տերյանը մասնակցել է Վարդավառի տոնակատարությանը: Ներկա է եղել նաև Իսահակյանը, որը և հետագայում գրի է առել Տերյանի այդ պահի դիտարկումները. «Նայի՛ր,- ասում էր Վահանը ինձ,- ա՜խ, ի՜նչ տխուր աչքեր ունեն մեր գյուղացիները, ի՜նչ մտահոգ դեմքեր՝ արևով, անձրևով այրված ու բովված: Ի՜նչ դառն աղքատություն է կաթում վրաներից, բայց ուրախանում են: Բայց ի՜նչ թախծոտ ուրախություն է այս: Իբրև թե ուրախ երգեր են երգում, բայց ինչքա՜ն վիշտ ու մորմոք կա սրանց ուրախ երգերի մեջ: Դարերի տառապանքն է խոսում սրանց բերանով: Այս ժողովրդին մեր ինտելիգենցիան չի կարող հասկանալ, ո՞ւր մնաց օտարը: Մեր նոր գրողներից Թումանյանը և դու, միայն երկուսդ, զգում եք մեր ժողովրդին: Չեզանից հետո կամ նոր, բոլորովին նոր երգ պիտի ասել, կամ պիտի լռել»: Եվ Տերյանն ասաց այդ նոր խոսքը, որը «Մթնշաղի անուրջներ» ժողովածուն էր:

Գրքի առաջին բանաստեղծությունները մամուլում տպագրվել են 1906-ին Վահան Շվին և Վահան Տեր-Գրիգորյան ստորագրություններով: Իսկ 1908-ին Վահան Տերյան ստորագրությամբ լույս է տեսնում նրա «Մթնշաղի անուրջներ» ժողովածուն, որն իրենով մի նոր դարագլուխ է բացում հայ գրականության մեջ: Գրքում զետեղված էր 72 բանաստեղծություն:

Տերյանի գրական մուտքը շռնդալից էր: Նրան ողջունում են Թումանյանը և Իսահակյանը: Դա ոգեպնդում է նրան. «Երկուսիդ կարծիքը բացարձակ արժեք ունի ինձ համար, այլևս քննադատությունից վախ չունեմ»:

1914 թ. օգոստոսին սկսած Առաջին աշխարհամարտին Տերյանն արձագանքում է հոդվածներով (որոնցից առանձնահատուկ է «Հոգևոր Հայաստան»-ը) և հայրենասիրական բանաստեղծություններով: Տերյանը շատ ծանր տարավ ցեղասպանության անասելի ողբերգությունը:

Ավարտելով ճեմարանը՝ նույն 1906 թ. նա ուսումը շարունակում է Մոսկվայի համալսարանի պատմաբանասիրական բաժանմունքում՝ ռուսաց լեզու և ռուս գրականություն մասնագիտությամբ, որն ավարտում է 1912 թ.՝ պետական քննությունները հետաձգելով հաջորդ տարվան:

1906 թ. դեկտեմբերի 3-ին հակահնքնակալական գործողությունների մեղադրանքով Տերյանը ձերբակալվել է և 10 օր կալանավորվել Մոսկվայի Բուտիրյան բանտում: Հանցակազմի բացակայության պատճառով դեկտեմբերի 13-ին ազատ է արձակվել:

1910-1912 թթ. Տերյանը հիմնադրում և համախոհների հետ լույս է ընծայում «Գարուն» ալմանախը: Լույս է տեսնում երեք համար, որոնց մեջ տպագրվում են և՛ արևելահայ, և՛ արևմտահայ գրողներ:

Լույս են տեսնում նաև գրականագիտական-քննադատական ուսումնասիրություններ: Տերյանը հակված էր նորոգելու գեղարվեստական-քննադատական մտածողությունն ամբողջությամբ և բերելու գրական նոր մշակույթ՝ ընդգրկելով նաև թարգմանական գործը:

1911 թ. փետրվարին Տերյանն ամուսնանում է նորնախիջևանցի Սուսաննա Պախալովայի (1887-1936) հետ, որը ծնողների հետ ապրում էր Ստավրոպոլում: Շուտով պարզվում է, որ Սուսաննան հիվանդ է թոքախտով, որով վարակվում է նաև բանաստեղծը:

1912-ին լույս է տեսնում «Բանաստեղծություններ» խորագրված նրա երկրորդ գիրքը, որի մեջ զետեղվում են վերամշակված «Մթնշաղի անուրջներ»-ը և նոր շարքեր: Դա Տերյանի հրատարակած վերջին գիրքն էր: Հետագայում գրածները մեզ են հասել կա՛մ մամուլում տպագրված վիճակում, կա՛մ որպես անտիպ ժառանգություն:

1912 թ. հիմնադրում է «Պանթեոն» հրատարակչությունը և ծավալում գրահրատարակչական, թարգմանական լայն գործունեություն:

1913-ին հայտնի գիտնականներ՝ պատմաբան Նիկողայոս Ադոնցի և լեզվաբան Նիկողայոս Մառի հորդորներով ու աջակցությամբ դառնում է Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների բաժանմունքի ուսանող: 1913-1917 թթ. Տերյանն ապրում և ստեղծագործում է Պետերբուրգում:

Այս տարիներին նրան ոչ միայն բարոյական, այլև նյութական աջակցություն է ցույց տալիս Հ. Թումանյանը, իսկ 1914-ի սկզբին նրան ընդունում է իր ղեկավարած Հայ գրողների կովկասյան ընկերության անդամ: Տերյանն աստիճանաբար կապվում է հայ իրականության հետ, աշխատակցում է «Մշակ» լրագրին:

1914 թ. ապրիլի 30-ին Թիֆլիսի երաժշտական ընկերության դահլիճում Տերյանը հանդես է գալիս «Հայ գրականության գալիք օրը» զեկուցմամբ, որը տևում է երկու ժամ: Այդ զեկուցմամբ Տերյանը տեսական ձևակերպում էր տալիս հայ գրականության մեջ սկիզբ առած նոր դարաշրջանին: Այդ իսկ պատճառով այն ունի գրական հրովարտակի նշանակություն: Մեկ այլ դասախոսությամբ՝ «Հայոց նոր շրջանի բանաստեղծության ոճի ու լեզվի զարգացման մասին», 1917 թ. հունվարին Տերյանը հանդես է եկել Երևանում:

1915-1916 թթ. մասնակցում է Բրյուսովի և Գորկու կազմած ու խմբագրած «Հայաստանի պոեզիան» և «Հայ գրականության ժողովածու» գրքերի ստեղծման աշխատանքներին: Հայերենից ռուսերեն է թարգմանում Սունդուկյանի «Պեպո»-ն, Ռաֆֆու «Կայծեր»-ի առաջին հատորը, Շիրվանզադեի «Չար ոգի»-ն:

Նաև հայերեն է թարգմանել ռուս և եվրոպական գրողների առանձին երկեր՝ Ֆ. Սոլոգուբ, Վ. Բրյուսով, Է. Վերհարն, Պ. Վերլեն, Շ. Բոդլեր, Օ. Ուայլդ և ուրիշներ:

1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Տերյանը եռանդուն գործունեություն է ծավալում քաղաքական ասպարեզում: Նա աշխատում է Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատին կից Հայկական գործերի կոմիսարիատում, որը գործում էր նախ՝ Պետրոգրադում, ապա՝ Մոսկվայում: Գրում է «Թուրքահայաստանի մասին» զեկուցագիրը և նախապատրաստում օրինագիծը: Որպես խորհրդային պատվիրակության խորհրդական՝ 1918-ի հունվարին մասնակցում է Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցություններին:

1918-ին Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատի հանձնարարությամբ գաղթական հայությանն օգնելու նպատակով մեկնում է Կովկաս: Տանում է երկու վագոն դեղորայք, հագուստ և գումար (6. 194. 789 ռուբլի): Տերյանը լինում է Աստրախան, Պյատիգորսկ, Էսենտուկի, Միներալնիե Վոդի քաղաքներում: Ճանապարհորդել է գնացքով, ավտոմեքենայով, ուղտով, ոտքով… Նա կարողանում է մասնակիորեն հոգալ հայ գաղթականների կարիքները, կազմակերպել հիվանդների բուժումը, հագուստ և դրամ բաժանել նրանց:

1919 թ. աշնանը այս անգամ Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի հանձնարարությամբ մեկնում է Միջին Ասիա՝ Տաշքենդ. ճանապարհն անցնում էր Սամարայով և Օրենբուրգով: Տերյանը Ռուսաստանի կառավարության անդամ էր: Նրան տրված գործուղման վկայականում գրված էր, որ մեկնում է «շտապ և կարևոր հանձնարարությամբ»: Ճանապարհորդությունը Տաշքենդից հետագայում պետք է շարունակվեր Պարսկաստան և Թուրքիա: Դժվարին և ծանր տարիներ էին. երկիրը տնտեսապես քայքայված էր, կապերը խզված էին, շարունակվում էր կարմիրների ու սպիտակների քաղաքացիական պատերազմը: Տերյանը 1913-ից վարակվել էր թոքախտով, 1916-ից հիվանդությունը սրվել էր: Ճանապարհին հիվանդությունը խորանում է, և նա 1920 թ. հունվարի 7-ին վախճանվում է Օրենբուրգում: Այստեղ էլ թաղվում է: Հետագայում Երևանի Կոմիտասի պանթեոնում նրա հիշատակը հավերժացվում է շիրմաքարով:

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՈՒՇԱԳՐԱՎ ՄՏՔԵՐ

Հեղափոխություններ պատրաստում են հանճարները, իրականացնում՝ մոլեռանդները, իսկ դրա պտուղներից օգտվում են սրիկաները:

ՕՏՏՈ ՖՈՆ ԲԻՍՄԱՐԿ

Ես չեմ վախենում, երբ վատ մարդիկ գոռում են, սակայն ինձ համար ավելի սարսափելի է, երբ լավերը լռում են:

ՄԱՐՏԻՆ ԼՅՈՒԹԵՐ ՔԻՆԳ

Քաղաքական գործիչը պետք է կարողանա կանխատեսել՝ ինչ տեղի կունենա վաղը, մեկ շաբաթից, մեկ ամսից և մեկ տարուց: Իսկ հետո բացատրել, թե ինչու դա տեղի չունեցավ:

Հիմարներից առաջնորդներ եք պատրաստում, հետո հարցնում՝ որտեղի՞ց այս ավերակները:

ՈՒԻՆՍԹՈՆ ՉԵՐՉԻԼ

Մարդիկ բաժանվում են երեք կարգի՝ կուշտեր, սոված-ներ և անկուշտներ:

ԼԵՈՆ ՖԵՅԽՏՎԱՆԳԵՐ

Վերցրե՛ք ժողովրդից նրա պատմությունը, և հարյուր տարի անց նա կվերածվի նախրի, և ևս հարյուր տարի անց նրան հնարավոր կլինի կառավարել:

ՅՈՋԵՖ ԳԵԲԵԼՍ

Ինչ-որ մեկի կյանքում մենք ուղղակի դատարկ տեղ ենք, իսկ մեկ ուրիշի կյանքը դատարկ է հենց առանց մեզ:

ԱՆՆԱ ԱԽՄԱՏՈՎԱ

Յուրաքանչյուր մարդ ունի իր ներքին լույսը: Սակայն մեկի մոտ դա մոմի լույս է, իսկ մեկ ուրիշի մոտ՝ փարոսի:

ՏՈՆԻՆՈ ԳՈՒԵՐԱ

Աքլորի ծուղրուղուն բարձր է հնչում, սակայն հավկիթները հավն է ածում:

ՄԱՐԳԱՐԵՏ ԹԵՏՉԵՐ

Եթե ուզում եք ինձ սպանել, պարզապես ինձ թուրք անվանեք: Եվ ես կմեռնեմ ամոթից:

ԷՌՆԵՍՏ ՀԵՄԻՆԳՈՒԵՅ

Ամենաուժեղ զգացումը հիասթափությունն է՝ ո՛չ վիրավորանքը, ո՛չ խանդը և նույնիսկ ատելությունը: Դրանցից հետո ինչ-որ մի բան մնում է: Հիասթափությունից հետո դատարկություն է:

ԷՐԻԽ ՄԱՐԻԱ ՌԵՄԱՐԿ

Հումոր չունեցող մարդկանց կարևոր պաշտոնների նշանակելը շատ սխալ է:

ԼԵՈՆԻԴ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

Այս աշխարհում կարելի է փնտրել ամեն ինչ, բացի սիրուց և մահից: Դրանք իրենք քեզ կգտնեն, երբ կգա ժամանակը:

ԻՈՍԻՖ ԲՐՈԴՍԿԻ

Արժեքավոր աշխատություն լիբանանահայ թատրոնի մասին

Վերջերս «Արամ Մանուկեան» մատենաշարով Բեյրութում լույս է տեսել լիբանանահայ վաստակաշատ դերասան, բեմադրիչ, թատերախաղերի և թատերագիտական հոդվածների հեղինակ Հարութ Գնդունու «Լիբանանահայ թատրոնը (1920-2020)» աշխատությունը՝ Վարուժան Թենպելյանի ջերմ ու ամփոփ առաջաբանով: Գրքում տեղ են գտել հեղինակի բազմամյա ուսումնասիրության արդյունքները, որոնք ներկայացնում են լիբանանահայ թատրոնի մեկդարյա պատմությունը, դերասանների, բեմադրիչների, ասմունքողների, թատերախմբերի գործունեությունը, նրանց մասնակցությունն ու ներդրումը լիբանանահայ թատրոնի ստեղծման և զարգացման գործում: «Այս աշխատանքի առանձնահատկութիւններէն է սկզբնաղբիւրներու բծախնդիր օգտագործումը: Հեղինակը հավաքած ու լայնօրէն ուսումնասիրած է մէկ դարու ընթացքին 1920-2020 տարիներուն հրապարակուած հայկական թերթերը, որոնք հարուստ տեղեկութիւններ կը բովանդակեն թատերական կեանքը կերտած բեմադրիչներու, դերասաններու (նուազ տարողութեամբ) և թատերախաղերու մասին: Այս թերթերը ոչ միայն կը ներկայացնեն փաստացի տուեալներ, այլեւ հարուստ գնահատականներ, քննադատութիւններ եւ մտորումներ, որոնք կը կենսաւորեն լիբանանահայ թատրոնի պատմութիւնը: Այս աղբիւրներու ընդգրկումը խորք եւ վաւերականութիւն կու տայ այս աշխատասիրութեան»,- գրում է հրապարակագիր, վերլուծաբան Վարուժան Թենպելյանը:

Աշխատության հեղինակը, բացի մամուլում լույս տեսած հոդվածներից, իբրև սկզբնաղբյուր օգտագործել է հայ թատերական գործիչների հուշագրությունները, վկայությունները, հուշերը: Լիբանանահայ թատրոնին նվիրված այս աշխատությունը բաղկացած է հետևյալ մասերից.

1.1920-40-ական թթ. ժամանակաշրջանը. Լիբանանահայ թատրոնի սկիզբը:

2.1940-1980-ական թթ. գլխավոր թատերախմբերի, բեմադրիչների գործունեությունն իրենց ներկայացումներով:

3. 1980-2020 թթ. գործող թատերախմբերը և թատերական գործիչները:

Գրքի շնորհանդեսին մասնակցած բանախոս, բեմադրիչ Վաչե Ատրունին և մյուս ելույթ ունեցողները նշել են հեղինակի կատարած շնորհակալ աշխատանքը և նրա «դժուարին առաքելութիւնը Լիբանանի քաղաքական թէ պատերազմական փոթորկալից տարիներուն մէջ...»:

Լիբանանահայ թատրոնի պատմության հարցերին ժամանակին անդրադարձել են նաև Դավիթ Էվերեկյանը «Թատերայուշեր և նիւթեր լիբանանահայ թատրոնի պատմութեան» և Պերճ Ֆազլյանը «Վրաններ պողոտաներու վրայ» ու «Մտորումներ թատրոնի մասին» աշխատություններում, սակայն միայն վերջերս թատերագետները, թատրոնի պատմաբաններն իրենց ձեռքի տակ ունեցան համապարփակ, ամբողջական, ընդգրկուն հետազոտություն, որտեղ հեղինակը լուսաբանում է լիբանանահայ թատրոնի մեկդարյա գործունեությունը՝փաստացի տվյալներով, մեկնաբանություններով, ծանոթագրություններով, լուսանկարներով, դերացանկերով:

Աշխատության մեջ հեղինակն անդրադառնում է սկսած «թիթեղածածկ թատրոնի» առաջին ներկայացումներից, որտեղ ականատեսն ենք դառնում եղեռնից վերապրած հայ ժողովրդի բեկորների թատերական կյանքին մինչև հայ բարեբար, բազմաթիվ նվիրատվությունների հեղինակ, լիբանանահայ գաղութի զարգացման գործում իր մեծ ներդրումն ունեցած, լիբանանահայության պարծանք Հակոբ Տեր-Մելքոնյանի նվիրատվությամբ կառուցված և նրա անունը կրող շքեղ թատերասրահը, որի պատերի ներքո 1969-ից մինչև այսօր լիբանանահայ թատերասերները վայելում են հայ և օտար արվեստագետների հոգու և մտքի սխրանքը:

Թատրոնի պատմաբանն է, որ գալիք սերնդին է հանձնում իր ժամանակի երախտավորների ու նվիրյալների վաստակը, որի վկան, նաև մասնակիցն է եղել ինքը՝ Հարութ Գնդունին: Տարիներ շարունակ նա իր անմնացորդ ներդրումն է ունեցել լիբանանահայ թատրոնի զարգացման ու բարգավաճման բնագավառում:

Շնորհավորելով վաստակաշատ դերասան, բեմադրիչ Հարութ Գնդունուն իր բացառիկ ուշագրավ աշխատության լույսընծայման առթիվ՝ ցանկանանք նրան նորանոր հաջողություններ և նպատակների իրականացում:

Անահիտ ԲԵՔԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

Թուրքիա-Ադրբեջան ռազմական դաշինքի վերաբերյալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտաշխատողների հոդվածը «Small Wars & Insurgencies» հանդեսում

Հեղինակավոր «Taylor & Francis» հրատարակչության «Small Wars & Insurgencies» հանդեսում (2024 թ.՝ Q2, 2025 թ.՝ Q1) լույս է տեսել «From Alliance to «Soft Conquest»: the anatomy of the Turkish -Azerbaijani military alliance before and after the 2020 Nagorno-Karabakh war» («Դաշինքից դեպի «փափուկ նվաճում». թուրք-ադրբեջանական ռազմական դաշինքի անատոմիան 2020 թվականի Լեռնային Ղարաբաղի պատերազմից առաջ և հետո») գիտական հոդվածը: Այն հեղինակել են ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտաշխատողներ Լևոն Հովսեփյանը և Արտյոմ Տոնոյանը: Հրատարակչի էջում հոդվածն ունեցել է ավելի քան 828 դիտում-ներբեռնում, ինչը ոչ բաց հասանելիությամբ հոդվածի համար բարձր ցուցանիշ է:

Հոդվածում վերլուծվել են Թուրքիա-Ադրբեջան դաշինքի տեսահայեցակարգային հիմնավորումները, ձևավորման նախադրյալները, դաշինքի զարգացման միտումներն ու 2020 թ. արցախյան պատերազմից հետո երկկողմ ռազմական դաշինքի զարգացման նոր առանձնահատկությունները, ինչպես նաև թուրքական ռազմական դպրոցի դոմինանտության հաստատումն Ադրբեջանում: Վեր են հանվել ռազմական սերտ համագործակցության և մասնավորապես 2020 թ. արցախյան պատերազմում Թուրքիայի ներգրավվածության և դրանից հետո թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական համագործակցության որակական նոր փուլի առանձնահատկությունները:

«Հոդվածում հիմնավորվում է, որ Թուրքիայի ներգրավվածությունն արցախյան 44-օրյա պատերազմում և ռազմական ոլորտում խորացող համագործակցությունն իրենց ազդեցությունն են ունեցել և ունենում ադրբեջանական ազգակերտման գործընթացի, ինքնութենական ու գաղափարախոսական փոխակերպումների վրա՝ թյուրքականությունը դարձնելով դոմինանտ գաղափարախոսություն և ինքնութենական ընկալում»,- ասում է Լևոն Հովսեփյանը:

«Հոդվածի հիմնարար նշանակությունը թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական հարաբերությունների բնույթը վեր հանելու, իսկ կիրառական նշանակությունը՝ արցախյան 2020 թ. պատերազմից հետո այդ համագործակցության միտումները, դրանց հասարակական-քաղաքական ազդեցությունն Ադրբեջանում հասկանալու և Հայաստանի անվտանգության մարտահրավերների տեսանկյունից գնահատելու մեջ է»,- նշում է Արտյոմ Տոնոյանը:

Հոդվածը կարճ ժամանակում տարածում է գտել, ինչի ցուցիչներից են մոտ 2 տասնյակ գիտական հղումները, որոնց մի մասը միջազգային հեղինակավոր և «Scopus» ինդեքսավորում ունեցող պարբերականներում:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի բազային ֆինանսավորման շրջանակում:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

Վանի պատմական շինությունները շարունակում են մնալ կործանման վտանգի առաջ: Քաղաքի հայկական մշակութային ժառանգության մեծ մասը տարիների անտարբերության և անխնամության պատճառով հայտնվել է անմխիթար վիճակում. գրում է Ermenihaber-ը:

Տուրիզմի մասնագետ Մուրաթ Բեյազը, անդրադառնալով Թուրքիայում մշակութային ժառանգության հետ կապված խնդիրներին, նշել է, որ եթե այս հուշակոթողները վերականգնվեն, ապա 20 տարի նույն տեղում դոփելուց հետո Վանի զբոսաշրջությունը կարող է կրկին աշխուժանալ:

«Այս պատմական կառույցները ստեղծած մարդիկ, եթե այսօր տեսնեին դրանց վիճակը, բան չէր մնա, որ մեզ չասեին: Մենք մարդկանց ջանքն ու պատմությունը չհարգեցինք: Մենք չկարողացանք բացել հայկական վանքերը: Ամենը գանձագողերի կողմից կործանված են: Մենք տեր չենք կանգնում մեր մշակութային ժառանգությանը»,- քննադատել է Բեյազը:

Այդպիսի մշակութային կոթողների թվում են Վանի Բաշքալե շրջանում գտնվող 1700 տարվա Սուրբ Բարդուղիմեոս հայկական եկեղեցին, ինչպես նաև Գևաշի Սուրբ Թովմա վանքը և հանրահայտ Կարմիր եկեղեցին (Գարմրավանքը): Այս հուշակոթողները, որոնք երբևէ եղել են տարածաշրջանի մշակութային ինքնության անբաժանելի մասը, այսօր լքված են և պարբերաբար ենթարկվում են գանձագողերի թալանին:

Բեյազը նաև քննադատորեն է մոտեցել Վանի բերդի վերականգնման աշխատանքներին՝ ընդգծելով, որ դրանք առաջ են գնում դանդաղ տեմպերով, ապա հավելել. «Եթե այս կառույցները վերանորոգվեն, զբոսաշրջիկը հանգիստ կարող է Վանում 6-7 օր ժամանակ անցկացնել: Այս կոթողները պետք է հրատապ վերանորոգվեն»,- գրում է լրատվականը:

NEWS.am, 10.11.2025

Գիտնականները ներքին ձայնի և զարկերակի հաճախականության միջև տարօրինակ կապ են հայտնաբերել



Դանիայի Օրհուսի համալսարանի հոգեբանների անցկացրած նոր փորձն ապացուցել է, որ ներքին ձայնը, երբ մարդը մտքում խոսում է ինքն իր հետ, կարող է փոփոխություններ առաջացնել սրտի գործառույթներում, նույնիսկ երբ մարմինը լիովին անշարժ է: Հետազոտությունը հրապարակվել է «Psychophysiology» բժշկագիտական հանդեսում:

Գիտնականները վաղուց համոզվել էին, որ ներքին ձայնն օգնում է մարդկանց կենտրոնանալ, որոշումներ ընդունել և կառավարել հույզերը: Սակայն հարցն անպատասխան էր մնում. ի վիճակի՞ է արդյոք ներքին ձայնն անմիջականորեն ազդել ֆիզիոլոգիայի վրա:

Դա ստուգելու համար Միկկել Վալենտինի գլխավորած գիտնականների թիմը երկու փորձ է անցկացրել 18-75 տարեկան 90 կամավորների մասնակցությամբ: Յուրաքանչյուր մասնակից պառկել է սրտի զարկերի մոնիտորներին միացված մահճակալի վրա և կատարել երեք առաջադրանքներից մեկը՝ մտքում կրկնել դրական («Ես գլուխ կհանեմ», «Ինձ կհաջողվի») և բացասական արտահայտություններ («Ես բավականաչափ լավը չեմ») կամ մտքում չեզոք արտահայտություններ կրկնել՝ պարզապես թվեր հաշվել:

Մասնակիցների շարժումները վերահսկվել են սենսորներով՝ սրտի զարկերի փոփոխությունների պատճառ հանդիսացող ֆիզիկական ակտիվությունը բացառելու համար:

Արդյունքն անսպասելի էր. հուզական ներքին ձայնը՝ թե՛ դրական, թե՛ բացասական, սրտի տրոփյունի արագացում էր առաջացրել մտավոր «զրույցի» սկսվելուց մոտավորապես 10 վայրկյան անց: Միջին աճը կազմում էր րոպեում մեկ զարկից պակաս, մինչդեռ ազդեցությունը վիճակագրորեն նշանակալի էր:

Հետազոտողները տարբերություն չեն հայտնաբերել դրական և բացասական արտահայտությունների միջև. ներքին ձայնի երկու տեսակներն էլ հավասարապես ակտիվացրել են ֆիզիոլոգիական արձագանքը: Արդյունքն անկախ էր դեպրեսիայի մակարդակից կամ տագնապալից մտորումների հանդեպ հակվածությունից:

«Նույնիսկ երբ մենք բառերով չենք արտահայտում կամ շարժում չենք անում, ուղեղն ու մարմինն արձագանքում են հուզական մտքերին: Մեր ներքին երկխոսությունը բառացիորեն արտացոլվում է մեր սրտի աշխատանքի ռիթմերի մեջ»,- նշել է Միկկել Վալենտինը:

NEWS.am, 13.11.2025

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ – 150

Հուշեր և մանրապատումներ Վարպետի մասին*



ՎԱՐՊԵՏԻ ԽՄԲԱԳՐՈՒՄԸ...

Նայելիս Վարպետի հանրահայտ «Ավիկին» բանաստեղծության ձեռագիրը՝ գրված 1954 թ. հոկտեմբերին՝ ծննդյանս տասնամյակի առթիվ, ես նկատեցի մի փոքր հեղինակային ուղղում: Բանաստեղծության բնագրի վերջին տողը այսպես է գրված եղել.

Իմ կաթոգին սիրուն տղա:

Եվ հենց ձեռագրի վրա Վարպետը «սիրուն» բառը խմբագրում է՝ այն դարձնելով «սիրած»:

Արդյունքում ստացվում է՝

Իմ կաթոգին սիրած տղա:

Ընդամենը երկու տառի փոփոխություն, բայց մի շատ էական բան է փոխվում. «սիրուն» կարող են շատերը լինել, իսկ «սիրած»՝ մեկը...

ՄԻՆՉԵՎ ԿՅԱՆՔԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԸ

«Սևանա կղզի...» գիրքն արդեն տպագրված էր 2022 թվի հուլիսին, երբ ես մեր ընտանեկան արխիվում փնտրելիս Սոֆյա Իսահակյանի նամակները Վարպետին, գտա «Հայկական ՍՍՌ գերագույն սովետի դեպուտատ-195. թ.», բլոկնոտից մի առանձին ինքնագիր թերթիկ՝ վերնագրված «Սևանի լճի մասին»:

«Քանի կոպեկ արժե Жук-ի և մյուս ջրագետների կարծիքը, երբ նրանք Մոսկվայից են խոսում՝ առանց Սևանը տեսնելու և քննելու... Դրանք ռուս մարդիկ են, աչքի առաջ ունեն իրենց՝ ռուս ժողովրդի կոպեկական շահերը, նրանք կքամեն Հայաստանը մինչև վերջին կաթիլը և հայն ու Հայաստանը կշպրտեն մինչև տայգաները...

- Եթե «Правда» չտպագրեն մեր նամակը, կնշանակե՝ Մոսկվան կամ արհամարհում է հայ ժողովրդին, նրա ձայնը և նրա շահերը, կամ չի հրապարակում՝ վախենալով համայն աշխարհի ձայնից, բողոքից, քննադատությունից, ծաղրից և հայերի վայնասունից: Շատ բան կ'պարզվի: Կռիվ...

Սևանի մասին կռիվը սկսվում է 1956 թվի փետրվարի 1-ից:

Սերունդների կռիվ: Արյունոտ կռիվ...

Մոլիբդեն... Փոխարեն մեզ ջուր տվեք, մեր ջուրը մեզ թողեք...»:

Սա Իսահակյանի վերջին անդրադարձներից մեկն է Սևանին, բայց ոչ վերջինը: Սևանի պրոբլեմը հավետ նրա հետ էր, մինչև կյանքի վերջին օրը:

«...ՕԻՕԵՌՆԱԿԻ ՁԱԳՈՒԿԸ»

Վարպետը սիրում էր զրուցակցին հարցնել. «Իսկ դու բնիկ որտեղացի՞ ես»:

Մի օր էլ ես պապիկիս հարցրի «որտեղացի լինելու» առնչությամբ. «Պապի ջան, դու՝ պապս, գյումրեցի ես, տատիկս՝ ղարաբաղցի, հայրս ծնվել է Թիֆլիսում, մայրիկս՝ Կոստանդնուպոլսում, ես ծնվել եմ Երևանում: Հիմա ասա ինձ, խնդրեմ, ես որտեղացի՞ եմ»:

Պապիկս գոհ ժպտաց և իմ հարցին իր կողմից մի հարցում արեց. «Ավիկ ջան, եթե ձիու ախոռում ծիծեռնակը բույն դնի ու ձագուկ ունենա, ի՞նչ ես կարծում, այդ ձագուկը ձի՞ է, թե՞ ծիծեռնակ»:

Երկար մտածելու հարկ չկար: Եվ ես իսկույն պատասխանեցի. «Իհարկե՝ ծիծեռնակ»:

«Ապրե՛ս, դե ուրեմն դո՛ւ էլ, ինչպես ես, գյումրեցի ես...»:

Որքան հիշում եմ, մեր զրույցը 1954 թվականին էր:

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Հաճախ էր լինում մեր տանը, որ ճաշի սեղանի շուրջը խոսակցություններ, զրույցներ էին ծագում, քանի որ ճաշի ժամին (իսկ դա սովորաբար ցերեկվա ժամը 5-ն էր) բոլորս հավաքվում էինք մեկտեղ: Եվ խոսքն ու զրույցը բարի ավանդույթ էր դարձել:

5-րդ դասարանում էի սովորում, մենք ինչ-որ շարադրություն պետք է գրեինք, ուր պիտի օգտագործվեր Աստված բառը: Ես ինձ համար մտածում էի՝ ինչպես պիտի գրվի այդ բառը, հավանաբար առաջին տառը մեծատառով:

Եվ, ահա, հիշելով դա, ճաշին հարցուփորձի ժամանակ, ես պապիկին հարցրի.

- Պապի՛կ, Աստված բառը ինչպե՞ս պետք է գրվի: Կարծում եմ՝ առաջին Ա տառը պետք է գրվի մեծատառով:

- Աստված բառը, Ավի՛կ ջան, պետք է գրվի ամեն մի տառը մեծատառով և կրկնեց.

Ա Ս Տ Վ Ա Ծ:

«ԳՐԿԵԼ.. ԳՐԵԼ... ԳՈՐԾԵԼ...»

(Երրորդություն)

«Ես երգիչ եմ - երկնի թիթեռ...», «Սիրտս երկինք է...», «Ես ժայռի նման կանգնած եմ ամուր...», «Կուզեի լինել երկինք աստղավառ...», «Հրեղեն նժույգ երգել կուզեի...», «Ես աշխարհի մեջ երազն եմ սիրել...», «Ա՜խ, ինչքա՜ն, ինչքա՜ն կուզեի լինել /Զինվոր հասարակ...», բանաստեղծի բաղձանքների այս շղթայում, սակայն, յուրօրինակ տեղ է գրավում նրա մի ինքնախոստովանությունը՝ արված Վենետիկ, 1921 թ., մայիսի 31.

«Ես պիտի երրորդությունից կազմված լինեի՝ երրորդություն և միասնություն. երեք հոգի, երեք անձ իմ մեջ, որպեսզի մի եսս միայն քեֆ աներ, պարապ շրջեր, սիրեր, ճամփորդեր, ուտեր-խմեր, ման գար ու կանանց գրկեր. երկրորդ եսս ամբողջ օրը կարդար ու գրեր, ուսումնասիրեր ու խորհեր, իսկ երրորդ եսս հասարակության մեջ մեծ գործեր՝ կռիվ, պայքար, կուսակցություն, ծեծ ու դմփոց, պրոպագանդ, գործ, վեճ, կռվի դաշտ, տեռոր կազմել և այլն:

Այն ժամանակ միայն ես կզգայի ինձ բախտավորամբողջ ու բավարարված»:

«ԽԱՍԻԱԹՍ ԳԵՇ Է...»

Պատմում էր Նաիրի Զարյանը.

«1939 թվականի ամռանը Ավետիք Իսահակյանի հետ հանգստանում էինք Սևանա կղզու գրողների տանը: Մեզ հետ էին նաև նկարիչ Փանոս Թերլեմեզյանը, մեծանուն դերասանուհի Արուս Ոսկանյանը, մեր գրողներից Քոչարը, Սիրասը, Միշո Մանվելյանը:

Առավոտյան՝ նախաճաշից առաջ, հավաքվել, զրուցում էինք լիճ տանող աստիճանների գլխին, երբ նկատեցինք, որ հեռվից աստիճաններով բարձրանում է Արուս Ոսկանյանը՝ լայնեզր ճերմակ գլխարկով, որ փոխարինում էր հովանոցի, երկարուն ճերմակ խալաթը հագին: Երբ նա հավասարվեց մեզ, առանձին սիրով ողջունեց Ավետիքին:

- Է՜հ, լոգանքդ անուշ: Արևի վաննա լա՞վ ընդունեցիր, Արո՛ւս ջան:

- Աղեկ, աղեկ, սևցել եմ, Վարպե՛տ ջան, կուզե՞ս՝ քեզ ցույց տամ:

Եվ այս խոսքերի վրա Արուսը ձեռքի լայն շարժումով մի կողմ քաշեց խալաթի փեշը, ինչպես թատրոններում վարագույրն են բարձրացնում և արժանանում բուռն ծափերի:

- Գոցի՛ր, գոցի՛ր, Արո՛ւս ջան, թե չէ խասիաթս գեշ է...»:

«ԷՆ ՍԵՎ ՇՈՒՆԸ...»

«1951 թ. մայիսին,- պատմում էր ինձ Համո Սահյանը,- Գրողների միության մուտքի դիմաց հանդիպեցինք Ավետիք Իսահակյանին: Մենք ջերմ բարևեցինք Վարպետին, չորս հոգով էինք՝ ես, Սերո Խանզադյանը, Վահագն Դավթյանը և երիտասարդ բանաստեղծ ու քննադատ Բագրատ Ուլուբաբյանը Ղարաբաղից:

- Վարպե՛տ ջան, երիտասարդը Ստեփանակերտից է, շատ էր ցանկանում Ձեզ հետ ծանոթանալ:

Վարպետը պինդ սեղմեց Բագրատի ձեռքը և հարցրեց .

- Ասա՛, էն սև շունը դեռ սա՞ղ է:

Բագրատը զարմացած նայեց Վարպետին և կարկամած հարցրեց.

- Վարպե՛տ ջան, Դուք ո՞ւմ նկատի ունեք:

Վարպետն անվրդով, սակայն բավական բարձր ասաց.

- Բաղիրով շունը,- և ձեռնափայտը վերև ուղղելով, ամեն բառը շեշտելով՝ ասաց.

- Այո՛, նա կստակի այն ժամանակ, երբ Մոսկվայում սատկի մեծ շունը:

Մենք մեր տեղերում քարացած մնացինք: Ոչ ոք ձայն չէր հանում: Երեկոյան ուշ սկսեցինք իրար զանգ տալ, ուրեմն դու տանն ես, լավ է, ուրեմն հանգիստ ենք: Դե, ճիշտն ասած, մեր խմբում չկար մեկը, որ ստորության ընդունակ լիներ»:

** Խմբագրության կողմից: Որոշ կրճատումներով արտատպվում է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ավիկ Իսահակյանի «Երևանը երազում և արթմնի: Տաս տարի անց» գրքից: Անվանի գրականագետին Երևանի քաղաքապետարանի ավագանու որոշմամբ վերջերս շնորհվել է «Երևանի պատվավոր քաղաքացու» կոչում, ինչի առթիվ շնորհավորում ենք նրան և մաղթում նորանոր ստեղծագործական հաջողություններ:*

ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԿՅԱՆՔԻՑ

Հռչակավոր փիլիսոփա Պյութագորասին աշակերտում էր Էվաթլոսը: Ուսման վարձի կեսը նա վճարում է անմիջապես, իսկ երկրորդ կեսը նա խոստանում է վճարել առաջին դատական գործը շահելուց հետո: Էվաթլոսը ավարտում է ուսումը: Անցնում էին ամիսներ, նա չէր մասնակցում դատական գործերին և պարտքը մնում էր չվճարված: Պյութագորասը վճռեց դատարանի միջոցով ստանալ պարտքը: Սակայն մինչև այդ նա դիմում է Էվաթլոսին:

-Եթե դու շահես դատը, ապա պետք է վճարես պարտքդ՝ համաձայն մեր պայմանի, իսկ եթե տանուլ տաս, ապա պետք է վճարես համաձայն դատարանի որոշման: Պարզ է, որ դու կշահես կամ տանուլ կտաս դատը, ուրեմն, միևնույն է, վճարելու ես ինձ հասանելիք գումարը:

Այս հիմնավորումը Էվաթլոսին չի համոզում: Չէ՞ որ նա եղել է Պյութագորասի լավագույն աշակերտը: Եվ նա պատասխանում է.

-Եթե ես շահեմ դատը, ապա չպետք է վճարեմ Ձեզ, համաձայն դատարանի որոշման, իսկ եթե տանուլ տամ, ապա չպետք է վճարեմ համաձայն մեր պայմանի: Այսպիսով, ես շահեմ, թե տանուլ տամ, ոչ մի դեպքում չպետք է վճարեմ Ձեր պահանջած գումարը:

***

Իր պատանեկան տարիներին իտալացի մեծ նկարիչ Ռաֆայելն ապրել է հյուրանոցում: Նա չէր զլանում ծախսեր անելուց: Եվ ահա պարտքերի գումարը բավականաչափ մեծանում է, իսկ նա փող չի ունենում: Հյուրանոցի տերը զայրանում է, պահանջում է վճարել հաշիվը: Այդժամ Ռաֆայելը հայտարարում է, որ ինքը շուտով կմեկնի: Երկու-երեք օր հետո նա տիրոջը հայտնում է, որ մեկնում է:

- Իսկ փողե՞րը, - հարցնում է տերը:

- Ահա այնտեղ են,- պատասխանում է Ռաֆայելը՝ ցույց տալով սեղանի կենտրոնում ընկած ոսկե և արծաթե դրամների կույտը: Ապա շտապ վերցնելով ձեռնածանրոցը, նա դուրս է գալիս հյուրանոցից: Հյուրանոցատերը, ցանկանալով դրամը հավաքել և լցնել գրպանը, մեկնում է ձեռքը, սակայն ձեռքը պլստում է սեղանի վրայից: Դրամը նկարված էր:

Արվեստի մի ինչ-որ սիրող, տեսնելով այդ սեղանը, տիրոջից գնում է մի գումարով, որը հեշտությամբ ծածկում է տիրոջ ծախսերը:

***

Առաջին վարձու աշխատողը, որ պահանջել է վճարել լրացուցիչ աշխատած ժամերի դիմաց և հասել է իր ուզածին, եղել է Վերածննդի դարաշրջանի իտալացի խոշոր նկարիչ Միքելանջելոն: «Ահեղ դատաստան» որմնանկարն ստեղծելիս Հռոմի սիքստինյան կապելլայի առաստաղը նկարազարդելու ժամանակ նա Պավել 3-րդ պապի հետ կայացրել է համաձայնություն այն մասին, որ ցերեկը մինչև արևի մայրամուտը աշխատանքի դիմաց պետք է վճարվի մեկ դուկատ, իսկ մայրամուտից հետո՝ երկու դուկատ:

Հանճարեղ վարպետը պատրաստել էր հատուկ լապտեր, որ ամրացնում էր գլխին: Այսպիսով, նրա ձեռքերն ազատ էին, և նա կարող էր աշխատել նաև արևամուտից հետո:

Իսկ դա եղել է 1536 թվականին:

***

Անգլիացի աշխարհահռչակ գրող Արթուր Կոնան Դոյլը՝ «Նոթեր Շերլոկ Հոլմսի մասին» գրքի հեղինակը, մի անգամ այսպիսի կատակ է անում: Տասներկու հարգարժան, կրթված, և, որ ամենակարևորն է, խստաբարո բանկիրների ու բարձր պաշտոնյաների ուղարկում է միատեսակ հեռագրեր. «Ամեն ինչ բացվել է, իսկույն փախիր»: 24 ժամվա ընթացքում բոլոր այս «անբիծ» մարդիկ խուճապահար թողնում են Անգլիան...

Գիտնականները հերքում են միկրոալիքային վառարանների մասին առասպելները

1945 թվականին հայտնվելուց ի վեր միկրոալիքային վառարանը անցել է երկար ճանապարհ՝ ծավալուն լաբորատոր սարքից մինչև խելացի սարք, որն ի վիճակի է ոչ միայն տաքացնելու սնունդը, այլև պատրաստելու բարդ ուտեստներ: Այս առիթով Պերմի պոլիտեխնիկական համալսարանի մասնագետները անդրադարձել են միկրոալիքային վառարանների մասին ամենատարածված առասպելներին և բացատրել, թե ինչու դրանք չեն համապատասխանում իրականությանը:

Առասպել 1. Միկրոալիքները սնունդը դարձնում են ռադիոակտիվ

Ամենակայուն առասպելներից մեկն այն է, որ միկրոալիքային վառարանը իբր «ճառագայթում» է սնունդը՝ այն դարձնելով ռադիոակտիվ: Միկրոալիքները էլեկտրամագնիսական ալիքներ են, նման ռադիոազդանշաններին: Դրանք չեն իոնացնում նյութը և չեն փոխում ատոմային կառուցվածքը: Վառարանն անջատելուց հետո տաքացումն անմիջապես դադարում է, և սնունդը մնում է պարզապես տաք՝ առանց որևէ «ռադիոակտիվ» հետքերի: Այս առասպելը հավանաբար ծնվել է իոնացնող ճառագայթման հետ շփոթմունքի պատճառով, որը կենցաղային սարքերում չի օգտագործվում:

Առասպել 2. Միկրոալիքները ոչնչացնում են բոլոր վիտամինները

Կա կարծիք, որ միկրոալիքային վառարանը ոչնչացնում է սննդի վիտամինները: Դրանք կարող են քայքայվել տաքացման ժամանակ, բայց դա կապված է ջերմաստիճանի, այլ ոչ թե միկրոալիքների հետ: Ավելին, միկրոալիքային վառարանը կարող է ավելի օգտակար լինել, քան ավանդական եփումը. այն ավելի արագ է տաքացնում սնունդը՝ առանց ավելորդ ջրի, ինչը նվազագույնի է հասցնում սննդանյութերի կորուստը: Օրինակ, բանջարեղենը միկրոալիքային վառարանում պատրաստելիս պահպանում է ավելի շատ վիտամիններ, քան երկար եռացնելիս:

Առասպել 3. Մանկական սնունդը դառնում է թունավոր

Ոմանք կարծում են, որ միկրոալիքային վառարանում տաքացրած մանկական սնունդը վնասակար է դառնում: Սա ճիշտ չէ. միկրոալիքները չեն փոխում սննդի քիմիական կազմը: Սակայն տաքացումը կարող է լինել անհավասար, ուստի կարևոր է տաքացումից հետո մանրակրկիտ խառնել սնունդը և թույլ տալ, որ այն մի փոքր սառչի, տաք կետերից խուսափելու համար, որոնք կարող են այրել երեխային:

Առասպել 4. Չի կարելի ջուր տաքացնել թեյի համար

Համոզմունք կա, որ միկրոալիքային վառարանում տաքացրած ջուրը վտանգավոր է: Սա կապված է գերտաքացման ռիսկի հետ. հարթ, առանց միկրոխախտումների տարայում ջուրը կարող է հասնել եռման կետին առանց տեսանելի փրփրոցի, իսկ հետո շարժելիս կտրուկ «եռալ»: Ֆիզիկոսները խորհուրդ են տալիս պարզ լայֆհակ՝ բաժակի մեջ դնել փայտե ձող, գդալ կամ թեյի պարկ: Սա ստեղծում է գոլորշու առաջացման կենտրոններ՝ տաքացումը դարձնելով անվտանգ:

Միկրոալիքային վառարանը՝ որպես առաջընթացի խորհրդանիշ

Միկրոալիքային վառարանը պարզապես կենցաղային սարք չէ, այլ օրինակ է, թե ինչպես պատահական բացահայտումը փոխեց առօրյա կյանքը: Այն ցույց է տալիս, թե ինչպես է ֆիզիկան ծառայում մարդկության բարօրությանը: 1940-ականներին սննդի տաքացման համար միկրոալիքների բացահայտումը հեղափոխություն էր, և այսօր խելացի վառարանները շարունակում են կատարելագործվել՝ հերքելով հնացած առասպելները:

news.am, 9 հոկտեմբերի, 2025

Գիտնականները նշել են այն սննդամթերքները, որոնք մահացու սպառնալիք են մարդկության համար

Հետազոտողների միջազգային խումբը հայտարարել է, որ ամբողջ աշխարհում գերմշակված սննդի սպառման արագ աճը խոշոր սննդի կորպորացիաների գործողությունների, այլ ոչ թե սպառողների ազատ ընտրության արդյունք է: Այս ընկերությունները ոչ միայն խթանում են ոչ առողջարար ապրանքների պահանջարկը, այլև ակտիվորեն խոչընդոտում են այն միջոցառումները, որոնք կարող են նվազեցնել դրանց բացասական ազդեցությունն առողջության վրա: Ուսումնասիրությունը հրապարակվել է The Lancet ամսագրում:

Գերմշակված սննդամթերքի մեջ են մտնում խորտիկները, քաղցրավենիքը և կիսաֆաբրիկատները: Դրանք պատրաստվում են վերամշակված բաղադրիչներից և սննդային հավելումներից, գործնականում չեն պարունակում սննդանյութեր և լի են շաքարով, աղով և հագեցած ճարպերով:

Մելբուռնի համալսարանի դոցենտ և ուսումնասիրության ղեկավարներից մեկը՝ Դյորդ Սկրինիսը, ընդգծել է, որ գերմշակված սննդամթերքի դեմ պայքարը պետք է լինի համարձակ և համակարգված:

«Միայն ցածրորակ արտադրանքի խիստ վերահսկողության և առողջ ընտրության իրական աջակցության համադրությունը կբարելավի բնակչության սննդակարգը»,- նշել է նա:

Գիտնականներն առաջարկել են գերմշակված սննդի տարածումը զսպելու համար անհրաժեշտ միջոցառումներ՝ գովազդի սահմանափակում (հատկապես երեխաների համար), նման ապրանքների վաճառքի արգելում դպրոցներում և հիվանդանոցներում, ինչպես նաև սուպերմարկետներում դրանց համար հատկացված տարածքի կրճատում:

168.am, 25 նոյեմբերի, 2025 թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ինստիտուտի հայ հին և միջնադարյան գրականության բաժնի գիտաշխատողի թափուր տեղի համար (աշխատաժամանակ՝ շաբաթական քսան ժամ)

Համաձայն «Գիտական կադրերի ատեստավորման կարգը, գիտական պետական կազմակերպություններում գիտական և ճարտարագիտատեխնիկական պաշտոնները և դրանց գնահատման նվազագույն չափանիշները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 21 դեկտեմբերի 2023 թվականի N 2298-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 30 հունվարի 2025 թ. N 102-Ն որոշման՝ մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որը՝

1. ունի կազմակերպությունում իրականացվող գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառներում գիտական աստիճան կամ մագիստրոսի (դիպլոմավորված մասնագետի) որակավորում.

2. ունի գիտական, գիտատեխնիկական կամ գիտակրթական առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

3. վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) հայագիտություն և հումանիտար գիտությունների մասնագիտություններով համահեղինակել է առնվազն մեկ հրապարակում ՄԳԾ-ում կամ մեկ մենագրություն:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում,

բ) լուսանկար,

գ) ինքնակենսագրություն,

դ) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,

ե) գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճենը (դրա առկայության դեպքում),

զ) գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում),

է) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,

ը) վերջին հինգ տարիների ընթացքում հրապարակված աշխատանքների ցանկ (առկայության դեպքում),

թ) անձնագրի և սոցիալական քարտի կամ նույնականացման քարտի պատճենները,

ժ) բնութագիր վերջին աշխատավայրից:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ Երևան, Գր. Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ (գիտական քարտուղարին), հեռ. 56-32-54:

***

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ինստիտուտի հայ հին և միջնադարյան գրականության բաժնի կրտսեր գիտաշխատողի թափուր տեղի համար (աշխատաժամանակ՝ շաբաթական քսան ժամ)

Համաձայն «Գիտական կադրերի ատեստավորման կարգը, գիտական պետական կազմակերպություններում գիտական և ճարտարագիտատեխնիկական պաշտոնները և դրանց գնահատման նվազագույն չափանիշները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 21 դեկտեմբերի 2023 թվականի N 2298-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 30 հունվարի 2025 թ. N 102-Ն որոշման՝ մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որը՝

1. ունի կազմակերպությունում իրականացվող գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառներում գիտական աստիճան կամ մագիստրոսի (դիպլոմավորված մասնագետի) որակավորում.

2. բարձրագույն մասնագիտական հիմնական կրթական ծրագրերով առաջին ավարտական փաստաթուղթ (դիպլոմ) ստացել է առավելագույնը 20 տարի առաջ:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում,

բ) լուսանկար,

գ) ինքնակենսագրություն,

դ) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,

ե) գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճենը (դրա առկայության դեպքում),

զ) գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում),

է)կադրերի հաշվառման անձնական թերթիկ,

ը) վերջին հինգ տարիների ընթացքում հրապարակված աշխատանքների ցանկ (առկայության դեպքում),

թ) անձնագրի և սոցիալական քարտի կամ նույնականացման քարտի պատճենները,

ժ) բնութագիր վերջին աշխատավայրից:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ Երևան, Գր. Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ (գիտական քարտուղարին), հեռ. 56-32-54:

***

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ինստիտուտի հայ հին և միջնադարյան գրականության բաժնի լաբորանտի թափուր տեղի համար (աշխատաժամանակ՝ շաբաթական քառասուն ժամ) և նույն բաժնի լաբորանտի թափուր տեղի համար (աշխատաժամանակ՝ շաբաթական քսան ժամ)

Համաձայն «Գիտական կադրերի ատեստավորման կարգը, գիտական պետական կազմակերպություններում գիտական և ճարտարագիտատեխնիկական պաշտոնները և դրանց գնահատման նվազագույն չափանիշները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 21 դեկտեմբերի 2023 թվականի N 2298-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 30 հունվարի 2025 թ. N 102-Ն որոշման՝ մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որը՝

1.հանդիսանում է կազմակերպությունում իրականացվող գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառների բարձրագույն մասնագիտական հիմնական կրթական՝ բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի ծրագրերով ուսումնառություն անցնող ուսանող կամ ավարտած մասնագետ:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում,

բ) լուսանկար,

գ) ինքնակենսագրություն,

դ) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,

ե) գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճենը (դրա առկայության դեպքում),

զ) գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում),

է) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,

ը) վերջին հինգ տարիների ընթացքում հրապարակված աշխատանքների ցանկ (առկայության դեպքում),

թ) անձնագրի և սոցիալական քարտի կամ նույնականացման քարտի պատճենները,

ժ) բնութագիր վերջին աշխատավայրից:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ Երևան, Գր. Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ (գիտական քարտուղարին), հեռ. 56-32-54:

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Խմբագիր՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24/4, հեռ. 58-18-23, 3-16 Դասիչ՝ 69268,

գրանցման վկայական՝ 448: էլ. հասցե՝ armine.pet21@mail.ru

Ստորագրված է տպագրության՝ 28.11.2025 թ.: Տպագրվում է ՀՀ ԳԱԱ տպարանում: